

1741

674

911

Ն. Ն. ԱԼԵՔՍՈՅԵՎԱ

Ի Ն Չ Պ Ե Ս Կ Ա Զ Մ Ա Կ Ե Ր Պ Ե Լ
Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Յ Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը
Խ Ո Հ Ա Ն Ո Տ -Գ Ո Ր Ժ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ի
Յ Ե Վ Ճ Ա Շ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Ի Շ Ո Ւ Ր Զ Ը

640.245
12-29

ՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱՆԻ

ԵՎԱՆ

1930

312

640.245

Ա-29

24 SEP 2010

Ն. Ն. ԱԼԵՔՍԻԵՎԻ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ
ՀԱՍՏԱՐԱԿԱՑՎՈՒԹՅՈՒՆԸ
ԽՈՀԱՆՈՑ-ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ
ՅԵՎ ՃԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՑՈՒՐՁԸ

ԱՐ. ԽՈԼԱԲՈՎ ԱՌԱՋԱԲԻՆՉ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՂՅԱՅՈՒՆԻ
ՅԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
1930

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

«Հնգամյակը մասսաներին»—ահա մեր ժամանակի հիմնական լոգունդը. Այլ կերպ ել չեր կարող լինել քանի վոր մասսաների ակտիվ ու գիտակից մասնակցությունը սոցիալիստական շինարարությանը, առանց գիտության և առանց այդ շինարարության պլանը պարզ պատկերացնելու, հնարավոր չեր լինի և ուղղակի իմաստ ել չեր ունենա:

Բայց բավական չե մասսաներին հնարավորություն տալ գիտենալու ժողովրդական տնտեսության հնգամյա զարգացման պլանը, բավական չե, վորովհետև նրանք պետք ել լինեն այդ պլանի ակտիվ ու անմիջական կատարողները.

Այստեղից ել մեզ համար անհրաժեշտ ե դպունում առաջուց նախատեսել, գտնել և ցույց տալ աշխատավոր մասսաներին առաջիկա շինարարության մեծ գործի մեջ քաշելու ձևերը:

Մասսաներին շինարարության մեջ քաշելու ձևերը, ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր առանձին բնագավառում մասսայական հասարակայնության կազմակերպման ձևերն ունեն իրենց յուրահատուկ, հատկապես տնտեսության տվյալ բնագավառին հատուկ գծերն ու առանձնահատկությունները: Ենք հասարակական սննդի զարգացման գործով հետաքրքրող ընթերցողին առաջարկվող ընկե. Ալեքսեյեվայի այս ըրույուրն արժանի յե հատուկ ուշադրության,

ՀԱՅԿՈՒՄԻ ՏՊԱՐԱՆ
ՄԱՐԶԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՇԵ. Խ. 6035.
ՏԻՐԱԺ 3000 դ. 570



վորպես հասարակական սննդի գործի շուրջը տեղի ունեցած խորհրդային հասարակայնության ձևերի զարգացման փորձը սիստեմի յենթարկելու առաջին մի փորձ,

Շատ բան, ինչ վոր գրում եւ Ալեքսեյեվան, արդեն հայտնի յեւ, սակայն դրանով բրոցյուրն իր հետաքրքրությունը չի կորցնում: Բրոցյուրը հենց նրանով եւ գնահատելի, վոր փորձը սիստեմի յննթարկելով, հասարակական սննդի բնագավառում առաջին պլանն եւ մղում խորհրդային հասարակայնության կազմակերպման պրոբլեմը, այլ խոսքով աշխատավորների լայն մասսաներին ակտիվ և գիտակից ստեղծագործության մեջ քաշելու պրոբլեմը:

Հասարակայնությանը հասարակական սննդի գործի շուրջը կազմակերպելու ձևերը, վորոնց մասին ընկ. Ալեքսեյեվան իր բրոցյուրի մեջ խոսում եւ, — ճաշարանային հանձնաժողովները, քաղխորհությունների սեկցիաները, աջակցության կոմիտեները և այլն, — չեն սպառում, ի հարկե, այդ գործի բոլոր միջոցներն ու հնարավորությունները, չեղինակը միանգամայն ճիշտ կերպով մատնանշում եւ, վոր «այն ստեղծագործական նախաձեռնությունը, վորը տեղ-տեղ հանդես եւ գալիս առանձին ուայուններում, պետք եւ լայնորեն ընեկրկվի և զարգացվի հասարակական սննդի ամբողջ ճակտում»:

Սակայն ընկ. Ալեքսեյեվան մատնանշում եւ հասարակայնության կազմակերպման այնպիսի ձև, ինչպիսին եւ ճաշող-սպառողների կոնֆերենցիան: Յերկրում Աշխատավորների լայն մասսաներին հասարա-

կական սննդի կազմակերպման գործի մեջ քաշելու այդ ձևը թիւլադրում եւ ինքը կյանքը:

Կարծում ենք, վոր ընկ. Ալեքսեյեվայի բրոցյուրը հասարակական սննդի աշխատավորների մեջ առաջ եւ բերելու հետաքրքրություն դեպի դրված պրոբլեմը և նրանց աշխատանքում հանդիսանալու յեւ իբրև յելման կետ խորհրդային հասարակայնությանը հասարակական սննդի գործի շուրջը զարգացնելու և ամրացնելու համար:

Պատահական չեւ, վոր հեղինակն իր բրոցյուրը վերջացրել եւ հասարակական սննդի ճակատում մրցություն կազմակերպելու վերաբերյալ գլխով:

Սոցիալիստական մրցումն որեցոր ժողովրդական տնտեսության նորանոր բնագավառներ և ընդգրկում: Հասարակական սննդի ճակատում տեղի ունեցող մըրցման, այդտեղի մեր ամեն մի հսկողության անդիջական հետևանքով բարելավվում եւ աշխատավոր մասսաների սնունդը, վորը նույնիսկ աշխատավորների ամենակիսագիտակից խավերի համար հանդիսանում եւ անհատական կյանքի ձևերի նկատմամբ՝ կոլլեկտիվ կյանքի ձևերի ունեցած առավելությունների լավագույն ապացույցը:

«Մըրցումը մեր պայմաններում, ինչպես ընկ. Ստալինն և ասում, այն լծակն եւ, վորի ոգնությամբ բանվոր դասակարգը կոչված եւ յերկրի ամբողջ տընտեսական և կուլտուրական կյանքը վերակառուցել սոցիալիզմի հիմունքով»:

Արք. Խալաբով

ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ՄՆՈՒՆԴԸ ՎԵՐԵԼՔՈՒՄ

Մեր յերկիրը տարեց-տարի ավելի ու ավելի խո-
շոր քայլեր ե անում դեպի ինդուստրացումը, Յեթէ
մի քանի տարի առաջ յուրաքանչյուր նոր կառուց-
ված գործարան, յուրաքանչյուր նոր ֆաբրիկա իրենց
լուս աշխարհ գալու փաստով լայն բանվորական
մասսաների մեջ մեծ վոգեորություն ելին առաջաց-
նում, այսոր այդ ֆաբրիկաներն ու գործարանները,
շախտերն ու հնոցները արդեն սովորական յերեռութ են:

Յերկիրն իր զժվարության ծանր մոմենտն ար-
դեն անց ե կացել, չկա այլևս վոչ մի ուժ, վորը կարո-
ղանա խորհրդային յերկը զարգացումը յետ կատեց-
նել: Հոկտեմբերյան հեղափոխություն կատարած բան-
վոր գասակարգն իր ուսերի վրա տանում ե նոր շի-
նարարության — սոցիալիստական շինարարության
աշխատանքը և նրա կյանքը լի յի աշխատանքային
հերոսության անթիվ որինակներով, այնպիսի հերո-
սության, վորն արդեն սկսում ե ընդգրկել նաև գյու-
ղը: Դրան իրքն որինակ կարող ե ծառայել սոցիալիս-
տական մրցումը, վորը ներկայումս անցնում ե մեկ
ֆաբրիկայից մյուսը, մեկ գործարանից մյուսը, գոր-
ծարանից յուղը՝ հայտարերելով բանվորների և բան-
վորուհիների նորանոր կաղմակերպչական ընդունա-

Մակայն բանվոր դասակարգի աշխատանքային
վերելքն ամենուրեք զուգորդում ե կյանքի պայման-
ների ավելի բարձր պահանջներին: Այդ հասկանալի
յի, շատ աշխատելով պետք ե նաև շատ ուտել, լավ
ուտել, լավ հագնվել իր յերեխաներին ավելի ճիշտ
դաստիարակել:

Առաջին պլանում դեռևս դրված են սննդի հար-
ցերը: Յեկ բանվորական խիտ մասսայում համառոքեն
ձայներ են լսվում բանվորներին և բանվորուելներին
հասարակական սնունդ տալու մասին:

Այդ պահանջի հետ ուղղակի կերպով կապված ե
բանվորների՝ իրենց ուժերը հասարակական սննդին
նվիրելու անհրաժեշտությունը: Այդ պայմաններում
կերակուր պատրաստելու և կճուճի (պտուկի) հոգալ
բանվորների և ծառայողների համար գառնում ե մի
ծանր բեռ, վորից ցանկություն կա վորքան կարելի
յի շուտ ազատվել: Յեթե առաջ հանրայնականները
գործարաններում և ֆաբրիկաներում չափազանց բա-
րակ շերտ ելին կազմում, այժմ այդ շերտը բավակա-
նին հաստացել, ընդարձակվել ե և դուրս գալու յելք
ե փնտում այն դրությունից, վորի մեջ նրան դնում
ե արտադրական աշխատանքը, հանրայնությանը և
տնային ընտանեկան պարտականությունները զուգոր-
դելու անհրաժեշտությանը:

7-Ժամյա բանվորական որ մտցնելը և դրա հետ
կապված կարճ հերթափոխությունները (աշխատան-
քային որվա), յերբ ընտանիքի անդամներն աշխատե-
լով զանազան տեղերում, հաճախ հնարավորություն
չեն ունենում միասին ճաշի հավաքվելու, նույնպես

ավելի խիստ կերպով դնում են հասարակական սննդի հարցը:

Ֆաբրիկաներն ու գործարաններն իրենց ամբողջ բանվորական մասսայով համառորմն հասարակական սննդի են պահանջում և «տանք հասարակական լավ ճաշ»։ «տանք նախաձաշ ցերիխն» լողունգները դառնում են խիստ ժողովրդական և սրտի մոտիկ լողունդներ։

Վերջին յերկու տարվա ընթացքում բանվորական մասսաների ճնշման տակ հասարակական սննդի սկսում և բանվորների կյանքում ավելի մեծ տեղ նըցվածել և բանվորական ընտանիքի կյանքը կերպարանափոխելու հզոր գործոն դառնալու Վերցնենք թեկուղ ճաշարանների աճումը։ 1926 թ. մեր միության մեջ կար 510 ճաշարան, 1927 թ. 668, իսկ ներկայումս միության մեջ կա 990 ճաշարան։ 1926 թ. ճաշարանները բաց եյին թողում 354.000 ճաշ, իսկ վերջին տարում ճաշարանների ամբողջ ցանցը բաց ե թողում որական 610.000 ճաշ։ Այդ նշանակում ե, զոր մեր ճաշարաններից որական անցնում են 610.000 մարդ։

Բնորոշ ե, զոր այդ ցանցի աճումը նկատելի յե գլխավորագես բանվորական ուայոններում, և զրանով ուղղակի հաստատվում և այն գրությունը, զոր բանվորների պահանջները հասարակական սննդի զարգացման գործում հանդիսանում են իրեն հիմնական մումբնա։ Վերցնենք թեկուղ այսպիսի մի որինակ, մետաղագործները մի տարի առաջ ստանում եյին 56.000 ճաշ, ներկայումս ստանում են 78.000 ճաշ։ Մանածագործներն ստանում եյին որական 48.000 ճաշ, այժմ

ստանում են 69.000։ Քիմիկոսները, վորոնք անցյալ տարի որական 15.000 ճաշ եյին ստանում, ներկայումս ստանում են 20.000 ճաշ։ Այսպիսով տարեց տարի բանվորների արդյունաբերական հիմնական խմբերի սպարկումն ընդարձակվում է։

Սակայն դրա կողքին մենք նկատում ենք նաև մի այլ հետաքրքիր պրոցես։ Հասարակական սննդին սկսում և ընդունելու աշխատավորների նորանոր խմբեր, որինակ՝ սեղոնայիններին։ Մոսկվայում 1928 թ. սպասարկվել են 28.000 սեղոնային։ Բացի դրանից, արդյունաբերական բոլոր խոշոր կենտրոններում, վորանեղ մեծ շինարարություն և տեղի ունենում (Դնիպրոստրոյ, Վոլխովստրոյ, Սելմաշստրոյ, Իվանովսկ-Վոդնեսենսկ), սեղոնայինները համարյա ամբողջովին արտելային սննդից անցնում են հասարակականի։ Այս պրոցեսը, ըստ յերեսութին, շարունակվելու յե, և հասարակական սննդի տնտեսական ամբողջ սիստեմը ստիպված էլինի հարմարվել սեղոնայիններին սպասարկելուն։

Սեղոնայիններից հետո գալիս են տորֆայինները։ Այս տարի մի շաբթ տորֆային հանքերում հասարակական սննդը ծավալվում է, ամենից առաջ իրերի փորձ, Մոսկվայի մոտ, վորպեսպի կարելի լինի մոտակա տարիներում վորքան կարելի յի լայն կերպով ծավալի այն։ Գործազուրկները նույնպես սպասարկվում են հասարակական սննդով։ Այս սպասարկումը նույնպես սիստեմ և դարձել։ Աշխատողկոմատն ամեն տարի միջոցներ և հատկացնում գործազուրկներին սպասարկելու համար, և այդ հատկացութիւնը տարեց տարի աճում են։ Որինակ՝ լինինգրադում վերջին տա-

բում բաց և թողնված 780.000 ձաշ՝ անցյալ տարվա 160.000 ձաշի դիմաց։ Նույն և գրությունը նաև Մոսկվայում և արդյունաբերական այլ կենտրոններում իր ամրող հասակով դրվում և յերեխաների սննդի հարցը։ Յեկ թէ այդ ձեզ հասարակական սննդի ամենից անշարժ ձեն ե, — վորովհետեւ նա բավականին միջոցներ և պահանջում և միենույն ժամանակ ֆլաուրեր և (այդ միջոցները տեղերում դժվարությամբ են հատկացվում), — մենք արդեն ունենք առանձին տեղերում յերեխաների սննդը հիմնելու փորձ։ Առաջին քայլն արավ Մոսկվան, կտզմակերպիլով Սոկոլնիկի ուսումնում յերեխաների հատուկ ճաշարան, յերկրորդ փորձը — Իվանովո-Վոլոնենսկը։

Ժողկամիրորհի վորոշումը, վորով խորհրդային տեղական մարմիններին առաջարկվում և յերեխաների սննդի համար միջոցներ հատկացնել, սկսում են տեղերում կենսագործել, և այդ հատկացումները կատարում են։ Այս նոր գործը հասարակական սննդում հանդիսանում է իրոք մի կարևորագույն պլոբեմ, վորն անհրաժեշտ է լուծել։

Այն քաղաքներում, վորտեղ կան բարձրագույն ուսումնական հաստատություններ, ուսանողությունը համարյա ամբողջովին անցել և հասարակական սննդի։

Այդ դեպքում չեր կարելի հասարակական սննդումը ծավալել առանց վորոշակի սիստեմի, առանց վորոշակի պլանի։ Այդ ճանապարհի վրա կանգնեց «ժողունակ» փայտերական ընկերությունը, վորն արդին յերկու տարի յեկ ինչ պլանային ձեռվ կիրառում և հասարակական սննդը Այդ պլանավորման փորձը ցույց է տալիս, թե այդ փորձը վորչափ ժամանակակից ին

Արդեն առաջին տարին ցույց է տվել վոր ճաշարաններ բացելու գործում ժողոննդի նախատեսած պլանը կատարված և վոչ միայն լրիվ, այլև սկզբնական նախատեսածից անցել եւ, հյանքը նախագծումներից և պլաններից առաջ և անցել։ 1927—28 թ. նախատեսված իր կառուցել 17.600.000 ոռություն ճաշարան։ 1928—29 թ. հաստրակական սննդի զարգացման գործի համար արդեն բաց և թողնված յեղել 22 միլիոն ոռություն, ըստ վորում գերակշռող աղբյուրներ են հանդիսացել տեղական միջոցները։ Այդ ցույց և տալիս, թե հասարակական սննդի գործը վորքան կենսական և յեղել։

Վերջապես ներկա տարում մնացած ամբողջ արդյունաբերության հետ միասին ժողոնունդը հարկադրված յեղավ անցնել հասարակական սննդի զարգացման հնգամյա պլանը կազմելուն։

Հնգամյա պլանի հիմքում դրված և խոշոր շինարարությունը։ Մանր շինարարության ճանապարհով ընթանալ չեր կարելի, այդ շինարարությունը չեր կարող ունենալ այն տնտեսումը, վորն անհրաժեշտ եր այդ գործում, — վոչ մթերքի բնագավառում, վոչ եւ վերադիր ծախսերը պակասեցնելու գործում, չեր կարող նա բանվորներին տալ նաև եժան ճաշ։ Հարց առաջացավ գործարանային տիպի խոշոր ձեռնարկություններ ստեղծելու անհրաժեշտության մասին, վորոնք կարողանան որվա ընթացքում բաց թողնել 6-ից մինչև 12 հազար ճաշ և ամբողջ արդյունաբերական ուսումնին մթերք տալ Արդեն այդ տիպի կառուցված առաջին միավարները (Իվանո-Վոլոնենսկի և Նիժեգորոդսկի խոնաց-գործարանները) այդ տեսակետից իրենց ամբողջովին արդարացըրել են։ Փոքր ճաշարա-

Նում 35 կոպեկի արժողության ճաշն այստեղ հնարավոր դարձավ տալ 20 կոպեկի. 45 կոպեկանոց ճաշը—40 կոպեկի, ըստ վորում այդ ճաշերն իրենց վորակով յերեք վատ չեյին փոքր ճաշարանի ճաշերից. Այստեղ մեծ դեր խաղաց բանվորների քանակի զգալի պակասումը ձեռնարկություններում, քանի վոր մեքենական ուժեղ սարքավորումը հնարավորություն տվեց զդալի չափով կրատել ձեռքի աշխատանքը:

Հնգամյակի առաջին վարիանտի համար նախատեսնամատ և 156 միլիոն սուբլի, վոր խոշոր շինարարությանն ընկնում և 126 միլիոն սուբլի. Այդ հնարավորություն և տալիս ստեղծելու հասարակական սննդի մոտ 400 հուժկու ձեռնարկություններ, վորոնքի վճարի կլինին բանվորներին հարկ յեղած ցեխում լրիդ քանակության ճաշ տալու:

Նույնիսկ խիստ մանրամասն հաշիվ տեսնելով, թե ինչ կարող և տալ հասարակական ոնունդը, ինչդ տարուց հետո քաղաքային բնակչությունն ընդգրկելուց հետո, հնգամյակի վերջին բաց թողնվող ճաշերի քանակը հասնելու յի 2.185.000-ի: Այս թիվը վորոշելիս յեթել են նրանից, վոր այն տեղերում, վորտեղ ծավալված և հասարակական սնունդը (իվանովո-Վոդնեսենսկ, Լենինգրադ), առ իր շրջագծի մեջ առնում և քաղաքային բնակչության 10—15% -ը: Հենց այդ ել դրված և հնգամյակի վերջում բաց թողնված ճաշերի քանակը վորոշելու հիմքում, Քաղաքային բնակչության 10—12% -ն ընդգրկելու համար պահանջված յերեք միլիոն ճաշի և ժողովնդի ճաշարաններում հնարավոր յեղած յերկու միլիոն ճաշերի աարերգությունը կազմող մոտ մեկ միլիոն ճաշը պետք և ծածկվի ի հաշիվ ար-

գյունաբերական կոռպերացիայի զանագան տեսակների, ի հաշիվ բուֆետային գործի, տները ճաշ բաց թողնելու և ի հաշիվ այն մասնավորի, զորին բաժին և մալու բաց թողնվող ճաշերի 10—15% -ից վոյ ավելի:

Հնգամյակը թանգարժեք, միջակ և եժանագին ճաշերի, փոխհարաբերության մեջ նախատեսում և առաջխաղացում դեպի եժանագին նամերի հանակը նվազեցնելու, միջակ տեսակի ճաշերի քանակը մեծացնելու և թանգարժեք ճաշեր բաց թողնելու դրությունը կայունացնելու կողմը:

Ցեթեն ներկայումս եժանագին ճաշերի քանակը՝ կազմում և ճաշերի ընդհանուր քանակի 40%, միջակ տեսակինը 50%, իսկ թանգարժեքը 10%, հնգամյակի վերջում պատկերն այլ և լինելու. եժանագին ճաշին բաժին և ընկնելու 25%, միջակին 60%, թանգարժեքին 15%: Հնգամյակի այդ ընթացքը միանգամայն ճիշտ և, քանի վոր ներկայումս ել մի շարք տեղերում շատ պարզ կերպով արտահայտված և եժանագին ճաշերի անկման ընթացքը և միջակ տեսակի ճաշերի աճումը—կատարելապես բնական մի յերեսը, վորը կապված և բանվոր դասակարգի գրության ընդհանուր բարելավման հետ: Այդ զրությունն ամբողջովին համապատասխանում է ժողովրդական անտեսության ընդհանուր հնգամյակի հետ, վորով բանվորի միջին աշխատավարձը բարձրանում է 50% -ով:

Հնգամյակով նախատեսվում և եժանագին և միջակ ճաշերի գների աասներկու տոկոսային իշեցում կատարել: Ինարկե այդ վորոշումը կարող և իրագուցվել այն գեպքում միայն, յեթե հումույթի գները նույն մակարդակի վրա մնան:

Ճաշի հասարակական սննդի շրջանառությունը ճնգամյակի վերջին հասնելու յե որական 879 հազար ռուբլու, նույնքան ել բուժետինը և 100.000 ռ. կի-թողնվելու թե բաշխիչների վերաբերյալ, վորոնք բաց են սափաբրիկատների վերաբերյալ, վորոնք բաց են ծըն ապագայում փայլուն կերպով զարդանայու յե. յին խանութ հանդիսանալու յե խոհանոց գործարան-ների և խոշոր ճաշարանների կիսափարիկատների սպառողական կոռպերացիայի յուրաքանչյուր մթերա-

յին խանութ հանդիսանալու յե խոհանոց գործարան-ների և խոշոր ճաշարանների կիսափարիկատների սպառողական կոռպերացիայի յուրաքանչյուր մթերա- յակայն այդ գեռ բովական չե, հասարակական սննդը ծավալելու յե նաև մեր հեռավոր ծայրամա- սերում, այնտեղ, վորտեղ նրա մասին վոչ մի գաղա- փար չունեն Միջին Ասիայում Ռւզբեկստանը նույն- պես ճաշարանների և խոհանոց գործարանների խիստ վորտեղ արդյունաբերական կենտրոններ են կառուց- վելու, զարգանալու յե հասարակական սննդի հզոր ձեռնարկությունների աշխատանքը, ՌՍՓԽՀ-ում հա- սարակական սննդն աճելու յե 3760/0-ով, Ռւկրայ- րեկստանում՝ 4000/0-ով, Բելոռուսիայում՝ 3750/0-ով, Ռւզ-

Միթե այդ չի հնչում իբրև ապագայի յերածը- տություն, միթե այդ ցույց չի տալիս, թե ինչպես նորհուրդների մեր յերկրում բանվորների բարեկեցու- աճում ե.

Յեկ միթե կարելի յե իբրև խնդիր առաջարկե- իրագործելու այդ վիթխարի պլանը, առանց գրա հետ միասին աշխատանքի այդ բնադրագործ համար վարժ և վորակավոր բանտկ սախատեսել.

Մենք մեր ճաշարանների և խոհանոց գործա- րանների համար վորակավոր բանվորական ուժի խը- տագույն աժամկետ միջիայն 6000 խոհարար, և նրանցից մեջ հաշվվում ե միջիայն կեսն և աշխատանքի համար պիտա- նի, մեացածներն արդեն բավականաչափ սպառել են իրենց ուժերը պլիտայի մոտ, հյուծվել են և ամենու- րեք ապագյում անցնելու յեն կենսաթոշակի: Հասա- րակական սննդի ծավալման հնգամյա պլանը պետք է ամրացվի կուլինար մասնագետների, կազմակերպիչ- ների, խոհարանների և վորակավոր բանվորների պատ- րաստման և վերապատրաստման աշխատանքով: Հըն- գամյա պլանն աշխատանքի այդ պատասխանատու բնագավառին պատվագրոր տեղ և հատկացնում: Հինգ տարվա ընթացքում պետք է պատրաստել 14,000 մար- դուց ավելի և արդյունաբերության համարյա մեկու- կես հազար կուլինար տեխնիկ-կազմակերպիչներ և նույնքան ել խոշոր մասշտաբի վարչատնտեսական աշխատանքներ: Հնգամյակի պլանը միջիայն ուսուց- ման համար նախատեսում ե 9 միլիոն ռուբլի և 5 միլիոն ռուբլի ֆարբիկա-գործարանային աշակերտու- թյան դպրոցների կառուցման համար:

Այս և այն պատեհը, վորը բացվելու յե մեր առաջ հնգամյակի առաջին վարյանաը: Սակայն նրա մշակման պրոցեսում նոր և ավելի լայն հեռանկարներ են բացվում: Ժողովնախորհը, հնգամյակը քննելիս ան- հրաճեղտ և համարել արդյունաբերական հատկացում- ները մեծացնել գարձյալ 78 միլիոն ռուբլով:

Կոռպերացիան պլանը քննելիս հնարավոր և հա- մարել տեղերում կոռպերատիվային ցանցի հետ միա-

սին զգալիորեն մհծացնել իր հատկացումները ևս 40 միլիոնով: Այսպիսով արգեն այդ յերկու փաստերն անհրաժեշտ են համարում հնգամյակը ճշտորեն մշակելիս վորոշել այն վոչ թե 156 միլիոն, այլ 252 միլիոն ու առանց տրանսպորտի, վորոն իր հնգամյակում հասարակական սննդի գործի մեջ ե գնում ևս 23 միլիոն ռուբլի:

Յեթև պլանավորման առաջին տարիներին կյանքը յենթադրածից առաջ ե անցել, ուրեմն պետք ե սպասել, վոր հնգամյակում կյանքն ավելի խոշոր քայլեր ե անելու, և հասարակական սննդի հնգամյա պըլանը արգեն ցույց ե տալիս նրա ծավալումը, վորպես ժողովրդական տնտեսության խոշոր ճյուղերից մեկը:

Զի կարելի ժխտել, վոր նոր շինարարությունը, և մանավանդ նրա զարգացման ավելի արագ տեմպը սերտորեն պետք ե կապվի հասարակական սննդի արտադրանքի վորակի հետ: Մեզ մոտ կան անթիվ թերթյուններ: Հենց աշխատանքի սիստեմը, ինչպես ամեն մի նոր գործում ունի բազմաթիվ թերթյուններ: Հնգամյա պլանն իր ամբողջ ծավալով գնում և վորակի հարցը, և առանց այդ պրոբլեմը լուծելու, քանակական աճման հարցերը չնշին չափով անդամ չեն կարող վոչ վոքի բավարարել: Այստեղ հասարակական սննդին ոգնության և հասնում դիտությունն ու աշխատանքի գիտական կազմակերպումը: Այդ բնագավառում մեծ աշխատանք ե կատարում Սննդա պիտական խորհուրդը, վորտեղ տեսականորեն մշակվում ե սննունդը աշխատանքի առանձին խմբերին հարմարեցնելու խնդիրը: Պետք ե համապատասխան սննունդ մատակարարել մասնածագործին, կառուցուիլին, մետա-

լագործին, խորհրդային ծառայողին, Պետք ե տալ մթերքների այնպիսի փոխհարաբերություն և այնպիս պատրաստել այդ փոխհարաբերությունը, վորպեսզի տվյալ խմբի յուրաքանչյուր աշխատավոր ստանա հատկապիս այն, ինչը վոր կարող ե վերականգնել նրա ուժերը և առաջ բերի որդանիզմում հարկ յեղած ռեակցիան: Փոքր խնդիր չեն նաև հասարակական սննունդը հարմարեցնել սպառողի ճաշակին և անցկացնել նրան ընտանիքի: մեջ: Այդ խնդիրները պետք ե լուծվեն հնգամյակի լուծման պրոցեսում:

Հասարակական սննունդը դուրս ե յեկել միծ ճանապարհի վրա, նու իր վերելքումն և գտնվում, և նրա դարգացման յուրաքանչյուր նոր քայլը, աշխատավորների համար մի նոր հաղթանակ ե, վորն անկասկած բանվորի կինցաղի և ընտանիքի մեջ նորությունն ե մտցնում և ազատագրված բանվորական ընտանիքին հնարավորություն և տալիս հասարակական շինարարության նորանոր ուժեր տրամադրելու:

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ

ԱՐԱՅԻ ՀԱՍՏԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ ՎՈՉ ՄԻ ՔԱՅԼ

Յեթև վերցնենք արդյունարերական վորեկ բնագավառ, լինի դա տեղատիլ, մետաղագործական արտադրության, լինի դա ածուխի արդյունահանության, — այդ ամենը սերտորեն կապված է սպառող մտսայի հետ: Վատ ածուխի համար ֆաբրիկաների և գործարանների ղեկավարներին են ձիգ տալիս: Վատ չի համարվում չայի հարցերու շեղարկողականը, բանվորը, վորը իրու-



նացող վերնաշապիկ և հազել, վատ կաթսայի, վատ սկավառակի համար տնային անտեսուհին չի գովի Այստեղ կա վորոշ փոխազդեցություն, վորոշ կապ, — սակայն յեթե նոտենանք հասարակական սննդին, այդ կապը, այդ փոխազդեցությունը հազար անգամ ավելի յի, հազար անգամ ավելի ամուր և և արտահայտվում է զգալիորեն ավելի հիմնագրին յեղանակով: Յեկ իրոք, յերբ ճաշարանն որական հազար ճաշ և բաց թողնում, հազար անգամ ել նրա սանդուխքով մարդիկ են անցուղարձ անում: Այդ մարդիկ ճաշ ին վերցնում, թեյ են խմում, ճաշարանում նախաճաշում են և անմիջապես գաղափար են կազմում նրա արտադրանքի վորակի մասին: Յուրաքանչյուր որ 1000 մարդ իր ստամբուլ ճանաչում և հասարակական սննդը, նրա մասին դատողություն և տալիս, նրա մասին ճաշարանից դեպի ֆաբրիկան, գործարանը, ցեխը լավ կամ վատ կարծիք են տանում հետևերը: Այսպես և հասարակական սննդի բնույթը: Իսկ միթե բանվորական մասսայի հետ հազարավոր թելերով կապվում չե նաև ֆաբրիկայում կամ գործարանում հենց ճաշարանն ստեղծելու մոմենտը: Վերցնենք ամենասովորական փաստերը, վորոնք ամեն քայլափոխի հանդիպում են ֆաբրիկաներում և գործարաններում: Այս իգանովո-Վոզնեսենսկի նահանգում մի խուլ անկյուն, որինակ՝ Պիսցովոն: Այդ Պիսցովայում կա մասնածքործական մի մեծ ֆաբրիկա, և ահա առաջին անգամ, կամ թե այն ժամանակ, յերբ փչում է շչակը, վորը լուր և տալիս, թե հասել ե հերթափոխության ժամը, մենք նկատում ենք թե ինչպես բակում, գերանների վրա և նրամց շուրջը բանվորները յերկար

թաթիթեղե բաժակներով յեռացրած ջուր են խմում և հենց այդ տեղ հետը վորեկ բան են ուտում, — վորը մի կտոր հաց, վորը մի այլ բան: Պատկերը բավականին անմիխիթար ե: Պարզ ե, վոր այդ բանվորներն իւրենց զժգոնությունն արտահայտում են այդպիսի վըրությամբ: Նրանք այդ մասին խոսում են ցեխներում: Դժոնությունն անցնում է ամբողջ ֆաբրիկային: Պարզ ե, վոր վորեց փոխադրվում է արտադրական խորհրդակցության, Արտադրական խորհրդակցության մեջ այս կամ այն բանվորը հանդիս է գալիս անհետ տեղին դիտողությունն: Եինչպես կարելի յի հարց դընել և աշխատանքի արտադրականության համար յերբ մեր սննդի պայմանները միանգամայն անպետք են: Այսպիս և հասունանում հասարակական սննդի անհրաժշտության հարցը, և այդ միտքը փոխադրվում է ցեխը, ցեխից — արտադրական խորհրդակցությունից — բանվորական լայն կոնֆերենցիա և այնտեղ այդ հարցը բարձրանում և արգեն ձևակերպված յեղանակով: Մենք տեսնում ենք, թե ինչպես այդ հարցուր և հազարավոր մարդկանց շահերը սերտորեն միմյանց են հյուսվում — կանոնավոր կերպով սննդու անհրաժեշտության մեջ հիմնական կեառւմ: Այդ հարցերն սկսում են ձընազնդի պես հետզհետե մեծանալ, ընդգրել ֆաբրիկաների և գործարանների ամբողջ հասարակայնությունը, և ամենացածրից սկսում ե ճնշում տեղի ունենալ բանվորական մասսայի կողմից, վորը պահանջում է իր կարիքները բավարարել: Այդ հասարակ որինակը ցույց է տալիս, թե ինչպես հասարակական սննդի հարցը բանականորին և միանգամայն որինաչափ է և

ընդհանրապես կապված ե հասարակայնության հետ։ Արագրական կոնֆերենցիան վորոշում և հանել՝ միջոցներ ձեռք առնել բանվորների կարիքները բավարարելու համար ճաշարան կազմակերպել։ Այդ բանաձևը գնում է քաղխորհուրդ, գործիում, քննության և առնվում, ապա տեղափոխվում և պլանային մարմինների նիստերը, սկսում են արդեն հարց դնել միջոցներ գտնելու մասին։ Բանվորների բանաձևն սկսում է ավելի կոնկրետ ձեեր ընդունել։ Արդեն ուղղակի հարց ե զրպում՝ ով պետք այդ գործի համար միջոցներ հատկացնի։ Սկսում են հաշվել։ Կենտրոնական բանվորական կոռպերացիան տալիս է այսքան, բանվորների կենցաղը բարելավող Փոնդը պետք և տա այսինչ գումարը, քաղխորհուրդն ու արդյունաբերությունը—այսինչ միջոցները։ Մենք արդեն տեսնում ենք, թե ինչպես բանվորներին կերպելու անհրաժեշտության այդ փոքրիկ հարցը կենդանի կերպարանը և ստանում և նոր մարդկանց նոր կազմակերպությունների ինչպիսի մասսայի քաշվում այդ գործի մեջ։

Վերցնենք ուշադրության խիստ արժանի մի որինակ, վորի մեջ բանվորական մասսաների ճնշման տակ կազմակերպությունները հասարակական սննդի զարգացման համար ստիպված են յեղել դիմել մի շարք կոնկրետ միջոցների։ Գործը տեղի յեւնեցել Նիժնի Նովգորոդում։ Ի՞նչպես և այնտեղ առաջ գալիս բանվորների սննդի գործն՝ անմիջապես ցեխերում։ Յերբ խոհանոց-գործարանի $4\frac{1}{2}$ հազար ճաշը բաշխվում է Սորմովյի մետաղագործներին։ Այս որինակը պարզ և շոշափելի կերպով վկայում է այն մասին, թե հասարակական սննդումն ինչպիսի խորն արմատներ ե գցել մասսայի մեջ, թե նա ինչպես անխղելի կերպով կապված ե բանվորական լայն հասարակայնության հետ։

Ահա կազմանի կյանքից դարձյալ մի որինակ։ Զի կարելի ասել, վոր կազմանը արդյունաբերական մեծ կենտրոն և, 1926 թվին կանանց կոնֆերենցիան սկսեց քննության առնել յերեխաններին գպրոցներում կերպելու հարցը։ Յերեխանները տաք կերպու չեն ստանում։ Պատգամավորական կոնֆերենցիան կայացնում է մի շարք վորոշումներ թե՛ յերեխանների մնունդը պետք և համարել խիստ կարեոր մի գործ, վոր կուպերացիան և հասարակական սննդի թաթարական

բաժանմունքը պետք է յերեխաների սննդի ծավալ-
ման գործնեմ ամեն տեսակի ոգնություն ցույց տան
ռժողովներին և վոր զպրոցներում յերեխաների սննդի
գործն առաջին հերթին պետք է կազմակերպվի բան-
վորական ռայոններում: Գործն անցնում է քաղաքա-
ցին խորհրդին: Կազմվում է հատուկ հանձնաժողով, և
այն հետեանքն է ստացվում, վոր Կազմնի դպրոցնե-
րի 700 յերեխաներն սկսում են տաք կերակուր ստա-
նալ:

Այդ որինակներից պետք է սույն յեղբակացու-
թյունը հանել, վոր հենց ճաշարաններ բանալու միտ-
քը, նույնիսկ առանց նախապատրաստական աշխա-
տանքի, սերտորեն կապվում է լայն հասարակայնու-
թյան հետ:

Ինչժամ բանվորներն իրենք այդպես շահագրգը-
ված են հասարակական սննդով:

Այդ, ինարկե, վոչ միայն այն պատճառով, վոր
ինչպես առածն է ասում. «սովը սուփրա չի»,
այլ՝ այդ իրոք ունի իր տնտեսական խորը պատ-
ճառները: Պրոֆ. Ստրումիլինի և մեր մյուս տնտե-
սագետների մի շարք ուսումնասիրությունները ցույց
են տալիս, վոր այն մարդը, վորը քիչ աշխատա-
վարձ և ստանում, սննդի համար ավելի յի ծախսում,
քան նա, ով ավելի շատ աշխատավարձ և ստանում.
Այսպես, որինակ, յեթե մեկն ստանում է 80 ոռութի,
իսկ մյուսը՝ 40, դրանցից 40 ոռութի ստացողը սննդի
համար ծախսում է 50%, այսինքն՝ 20 ռ., իսկ 80 ռ.
ստացողը ծախսում է իր աշխատավարձի մեկ յերրոր-
դը: Խորհրդային հանրապետությունների մեր Միու-
թյան մի շարք տեղերում կատարված հետազոտու-

թյուններն այդ դրությունն հաստակել են: Հետեա-
պես կարելի յի այն յեղբակացությունը հանել, վոր
աշխատավորների քիչ աշխատավարձ ստացող խմբերը
խիստ շահագրգուված են նրանով, վոր սննդի համար
ծախսվող գումարը պակասեցվի, և դրա յելքը նրանք
գտնում են հասարակական սննդով ծավալիու մեջ:

Սակայն բանը միայն այդ չեւ Ստրումիլինի ու-
սումնասիրությունները ցույց են տալիս նաև մի այլ
մոմենտ: Քիչ աշխատավարձ ստացողը միանգամայն
այլ կերակուր և ուսումն քան նա, ով ավելի յի ստա-
նում, Մեր կերակուրը բաղկացած է սննդի յերեք
հիմնական տարրերից՝ սպիտակուցային նյութերից,
ճարպային նյութերից և ածխաջրերից: Պրոֆ. Ստրու-
միլինն իր կատարած ուսումնասիրությունների հի-
ման վրա տալիս է հետեւյալ աղյուսակը.

Մինչեւ 100 ոռութի աշխատավարձ ստացողը գործ
է ածում՝ 27 գր. սպիտակուցային նյութ, 43 գր. ճար-
պային նյութ և 375 գր. ածխաջրեր: 150 ոռութի ստա-
ցողը գործ է ածում 104 գր. սպիտակուցային նյութ,
55 գր. ճարպային նյութ, 454 գր. ածխաջրեր: 200 ռ.
ստացողը՝ 148 գր. սպիտակուցային նյութ, 100 գր.
ճարպային նյութ և 500 գրամից ավելի ածխաջրեր.

Ուրեմն, նայած իր բյուջեյին, աշխատավորն իր
կերակրի բաղադրիչ մասերը փոփոխման և յենթար-
կում, հժանացնելով այդ կերակուրն ի հաշիվ սննդի
ավելի լիարժեք մթերքների—սպիտակուցային և ճար-
պային նյութերի պակասեցման: Այսպես և ասում գի-
տությունը: Սակայն և կյանքը՝ մեր ամենորյա գի-
տությանը յենթակա փաստերով մեղ համոզում են, վոր
բանվորը սննդի գործով խստորեն շահագրգուված է, և

վոր նրա հյութական գրությունը հսկայական նշանակություն ունի իր սննդի գործին։ Անհրաժեշտ է նաև մասնանշել այն հանգամանքը, վոր արտադրական աշխատանքի վրա իր յեռանդի վորոշ մասն սպասող բանվորի առողջությունը զգալի չափով կախված է սննդի հետ, աճա թե ինչու բանվորները խստորեն շահագրգոված են հասարակական սննդի գործով։ ուրեմն հասկանալի յի, թե ինչու հասարակական սննդի վերաբերյալ մասսաների մեջ մուտք գործած այդ միտքն այդպիսի կենդանի և ուժեղ արձագանք և գտնում։

Կարող և արդյոք մեզ բավարարել այդ ինքնառու հասարակայնությանը իշտրկել վոչ։ Անհրաժեշտ է այդ հասարակայնությունը կազմակերպել, նրան վորեն ձն տալ, Առանց դրան, նաև չի կարող այդ անմիջական պայտան ունենալ, ինչ վոր անհրաժեշտ և հասարակական սննդին իբրև որինակ, վերցնենք թե՝ կուզ հենց մեր մամուլը։ Ամեն որ վորեն թերթում կարենի յի մեր ճաշարանների աշխատանքի վերաբերյել աճագին քանակությամբ դիտողությունների հանդիպել, Սակայն յիթե վերլուծման յենթարկենք այդ դիտողությունները և խմբերի բաժանենք, մենք կնըկատենք միմիայն յերկու հիմնական գիծ, վորոնց այդ դիտողությունները վերաբերում են։ Առողին խմբին վերաբերում են այդ դիտողությունները, վորոնք խոսում են հասարակական սննդին ամփոփելու անհրաժեշտության մասին, այն մասին, թե այս ինչ ուայոնը, Փարբեկան կամ զարձարանը ճաշարաններ չունեն։ յիբրուց խմբին վերաբերում են այն դիտողությունները, վորոնք խոսում են մեր ճաշարաններում տեղի ունեցող թերությունների և նույնիսկ անկարգու-

թյունների մասին։ Սակայն համարյա միանգամայն գոյություն չունեն այդպիսի զիտողություններ, վորոնք ավելի խորը թափանցին հասարակական սննդի հարցերի խորքը, վորոնք ցույց տան, թե ինչպես պետք է գործին ոգնության հասնել այս կամ այն գեպում, աշխատանքը լավացնելու ինչպիսի կոնկրետ միջոցներ կան։ Ի՞նչ և առում այդ, Ամենից առաջ այն, վոր լայն մասսան վերջի վերջու ինքը չգիտե, չի ուսումնասիրել ճաշարանների վոչ աշխատանքի պայմանները, վոչ նրանց դժվարությունները, վոչ ել նըրանց սիմանները։ այդ պատճառով ել նա ի վիճակի չեմ մամուլի եջերում ցույց տալ հասարակական սննդի գործին կազմակերպչական ոգնությունն հասցնելու միջոցներ։

Մենք լինակատար իրավունք ունենք առելու, վոր հասարակական սննդությունը վոչ մի քայլ չպետք և անի առանց հասարակայնության և պիտք և խոստովանել, վոր վարչատնտեսական վերսոնալը, արհեստակցական կազմակերպությունները զեր իսկական վոչ մի աշխատանք չեն կատարել՝ կազմակերպված հարարակայնություն ստեղծելու։ Այժմ արդեն կառուցվում են 1,000,200 ճաշ թողնող մեծ խոհանոց գործարաններ, սակայն զեպի այդ գործը քիչ հասարակայնություն և քաշված։ Լավագույն զեպում բանվորական մասսային կոչ են անում այդպիսի ճաշարաններ հիմնել և հասարակական սննդի ու մեր ճաշարանների կենցաղային նշանակության մասին մի շարք լավ բառեր են ասում, պրծավ գնաց. մինչդեռ՝ թե ինչ հոգածաս պետք է ինտեղացնել ճաշարան պատրաստելուն, ինչպես պետք և կուռուցել այդ ճաշարան պատրաստելուն, ինչպես պետք և կուռուցել այդ ճաշարանը, այս-

պիսի հարցեր ուսումնամիբության ժամանակ վոչ մի խրսք չի լինում այն մասին, վոր ճաշարանի նախագիծը պետք է քննության առնվի բանվորների մասնակցության, վոր բանվորական ժողովներում պետք է ծանոթագրներ այդ նախագծի հիմնական կողմերին, և այդ իհարկե, վատ ե.

Գ Լ Ո Ւ Խ III

ԱՌԱՆՁԻՆ ՎԻՃԱԿՈՒՄ

Չնայած վոր հասարակական սննդի բնույթը սերտուն կապված է բանվորական լայն հասարակայնության հետ, սակայն ճաշարանների և խոհանոց-գործարանների շուրջը հասարակայնությունը դեռևս չափազանց թույլ է կազմակերպված։ Վոչ մի կերպ չի կարելի գոհ լինել այն դրությամբ, վորտիրում և տեղերում։ Հասարակական սննդի մեր ձեռնարկությունները դեռևս իրենց աշխատանքում խիստ առանձին վիճակի մեջ են։ Վերցնենք թեկուղ իվանվո-Վողնեսինկը։ Այդտեղ կա մեծ խոհանոց-գործարան, վորն որական 15,000 ճաշ և բաց թողնում։ բոլոր խոշոր ֆաբրիկաներն ունեն կենտրոնական խոհանոց-գործարանի բաշխիչներ։ Ա ահա իվանովո-Վողնեսինկի խոհանոց-գործարանում ոյեղած աշխատանքի վերաբերյալ ԲԳՏ-ի կատարած հետազոտությունը ցույց է տվել, վոր այդ մեծ և խոշոր գործի շուրջը կազմակերպված հասարակայնություն գոյություն չունի, և այս բանը հաստատվում է այդ գործարանի յերեք տարվա աշխատանքից հետո։ Հետոնիտե զործարանում ալտու-

գրանքի վորակը վատացել է, գործարանը վերակառուցվել է, նոր շինարարություն է կառուցվել, պատրաստվել են մթերքների նոր պահեստարաններ։ Ժամանակ է յեղել, վոր գործարանը 8,000 ճաշի փոխարեն բաց է թողել 18,000 ճաշ։ Քաղաքում լուրեր են տարածվել, վոր շոգեխանություններում կերակուր յեփելը վատ է անդրագառնում մթերքի վրա և առաջ է բերում մասսայական ստամոքս այն հիվանդություններ։ Բանվորական հասարակայնությունն իմացել է արդյօք վոր այդ լուրերը դատարկ բաներ են։ Դժբախտաբար վոչ, Այդ մասին իմացել է գործկոմը, քաղաքային խորհրդի նախագահությունը, աջակցության հոգիտեն, սակայն բանվորական լայն մասան կապված չի եղել խոհանոց-գործարանի կյանքի հետ, չի իմացել այդ գործարանի գժվարությունները, ծանօթ չի յեղել այդ գործարանի աշխատանքում առանձին թերություններ առաջացնող պատճառներին և զրա հետևանքով բողոքներ ու գժվարություններ և առաջացել։ Վոչնչով ավելի լավ գրության մեջ չեյին նաև գործարանային բաշխիչները։ Նրանք սահմանափակ կյանք են ունեցել, և հասարակայնությունը նրա շուրջը չի կազմակերպվել։ Խեղղոց, հերթեր, մի շարք գեղղերում սանիտարական կանոնների խախտում, տաք կերակրի պակաս, — այդ ամենը տեղի յե ունեցել այն պատճառով, վոր բանվոր դասակարգը ժամանակին այդ անկարգությունների առաջը չի տեսել, լավ և մտածված խորհուրդ չի տվել։

Լավ չի գրված գործը նաև Մոսկվայում, Ճաշարանների հետազոտությունը ցույց է տալիս, վոր յեթե նույնիսկ ձեռնարկություններում կան ճաշարա-

նային հանձնաժողովներ, նրանք նույնպես միտուշ-
ված, միացված չեն, նրանց դեկավարող չկա, և նը-
րանք չգիտեն թե իրենք ինչ պետք ե անեն.

Սոկոլիկի ույոնում հասարակական սննդի ճա-
շարանային հանձնաժողովների աշխատավորների հա-
մար բազված դասընթացները ճաշարանային հանձ-
նաժողովների անդամների և տնտեսավորող մարմին-
ների միջև խորն անտաղոնիզմ առաջ բերին:

Եատ չաճախ հենց շնորհիվ այն հանգամանքի,
վոր բանվորական ճաշարաններում ոգնության կանչ-
ված ճաշարանային հանձնաժողովներն այնքան ել
հրահանգված չեն, չփոտեն ինչպես մոտենան աշխա-
տանքին, —վարչությունը նրանց վրա նայում և իրքն
ծանր բեռի վրա, վորից ճարկավոր և վորքան կարելի
յի շուտ ազատվել Ծնտեսավարները գերադասում են
առանձին աշխատանքը: Ճաշարանային հանձնաժողով-
ների անդամների ունեցած սխալ մոտեցումն ել ավելի
յի ամրապնդում այդ տեսակետը:

Ահա որինակ, ինչ ե գրում «Ոմծողննդի» նա-
խադահ ընկ. Ստարօբողոսառվ. «Ամբողջ դժվարու-
թյունը նրանում ե, վոր ճաշարանային հանձնա-
ժողովների անդամներից վոմանք ժայրահեղության մեջ
են ընկնում և իրենց ամբողջ ջանքերը դործ են զը-
նում հանձն ուղարքարձնելու: Որինակ, գեպքեր են
յեղել, վոր ամանների յերեսում մի յերկու տասնյակ
փշացած գարունգ են յերեան բերել և վորոշում են
կայացրել, թե ամբողջ վարունգները անպետք են և
պետք ե 8 տակառ վարունգն անմիջապես դեն ածել:
Այդ բանը ճաշարանների աշխատավորների նախա-
ճանությունը մեռցը ե:

Թվում ե թե այդպիսի փաստը տնտեսական կազ-
մակերպություններն այլ կերպ պետք ե ըմբռնե-
լին: Այդ փաստն ավելի շուտ ասում ե, վոր անհրա-
ժեշտ ե ճաշարանային հանձնաժողովների անդամների
հետ միասին աշխատել, վորպիսպէ կարելի լինի նը-
րանց դաստիարակել և սովորեցնել ճիշտ մոտեցում
ունենալ գործին, սակայն դժբախտարար, այլ ժողովա-
կացություն և հանգում, վերջը մենք տեսնում ենք,
վոր բանվորական հասարակայնությունը յիտ և մղվում
ճաշարաններից և միշտ ել այդ ճաշարանները մնապ-
կում են:

Միմիայն յերբ բանվորների և բանվորուեիների
լայն խավերը ճաշարանների կյանքին, նրանց զըժ-
վարություններին և նեղություններին տեղյակ կլի-
նեն, միմիայն այն ժամանակ բանվորական մասսան
բանվորական մասսաները կկարողանան ճաշարաննե-
րին ոգնության հասնել, և կատարել լուսակ կանհետա-
նա այն թշնամական քննադատությունը, վորն այժմ
տնտեսավարներին այդպիս խոտորեն հարգածում ե:

Բանվորներն ու աշխատավորուեիներն այնպես
խստ կերպով շահագրգուված են հասարակական սը-
նընդուի, վոր վախենալ նրանց աշխատանքին մոտեց-
նել, սշանակում և հասարակական սննդի ինդիրները
չհասկանալ:

Գործարանում, ֆաբրիկայում և շախտում պետք
ե գտնել հետաքրքրվող ոգնականների կենդանի կադ-
րեր: Այդպիսի կադրեր ստեղծելլ բավականին ճիշտ ե:
Մենք խում ենք միենույն պատճառարանությունը՝
թե աշխատող չկա, ակտիվը ժանրաբեռնված ե, ել
ինչպես զբաղվի ճաշարաններով և բաշխիչներով: Ստ-

կայն մթթե անպայման անհրաժեշտ և աշխատանքի մեջ քաշել հին ծանրաբնունված կազրերին և նոր, թարմ ակտիվ չստեղծել ճաշարանների և խոհանոցգործարանների շուրջը: Իսկ դրա համար բավական և զեկովար աշխատանքի մեջ քաշել կոռպերատիվ ակտիվից միմիայն մեկ յերկու մարդու: Պետք և ստեղծել, պետք և զաստիարակել հասարակական սննդի աշխատավորների այդպիսի նոր կադրեր, մանավանդ, վոր աշխատանքի այդ նոր բնագավառը յեթե վոչ ավելի, գոնես պակաս ուշադրության արժանի չի, քան ամեն մի այլ աշխատանք, վորն արդեն ունի լայն ճյուղավորված բանվորական հասարակայնություն:

Գ Լ ՈՒԽ ԱՎ

ԽՈՀԱՆՈՑ-ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Խոհանոց-գործարանների և ճաշարանների շուրջը կազմակերպված հասրակայնություն ստեղծելը վորոշ մտածված պլան և պահանջում, Պետք և ստեղծել վարից վեր առանձին մասերից բաղկացած, այդ մասերը միմյանց հետ կապող, և վորոշակի կենտրոն ունեցող մի շենք, վորի կենտրոնն իր վրա վերցնի զեկալարման նախաձեռնությունը: Կազմակերպված հասարակայնության ամենասորբին քնիչը ճաշարանային հանձնաժողովն ի Մինչև այժմ մարդիկ գեղի ճաշարանային հանձնաժողովի սխալ մոտեցում են ու-

նեցել: Նրանք այն յելակետն են ունեցել, վոր ճաշարանի կյանքով ամենից շատ շահագրդոված են նրանք, ովքեր այնտեղ ճաշում են: Այդ պատճառով ել ճաշարանային հանձնաժողովները կազմվում եյին ճաշողների կադրից: Այդ այն հետևանքն եր ունենում, վոր ճաշարանային հանձնաժողովներն ունենում եյին հոսուն կազմ: Վորմանք հեռանում եյին, նրանց փոխարեն նոր մարդիկ եյին գալիս: Աշխատանքի մեջ հաջորդականություն չկար: Ստեղծվում եյին յերեք, չորս, վեց մարդուց բողկացած հանձնաժողովներ, իսկ վերջ ի վերջո աշխատում եր նրանցից վորեե մեկը, իսկ կողեկտիվ վորպես այդպիսին արդեն գոյութուն չընենք: Ամենից առաջ պետք և այդ նախապաշտումից ճրաժարվել: Յեկ իրոք, ճաշարանը գտնվում է բանվորական ուղղությունում, առավելապես նրանում ճաշում են այս կամ այն ֆարբեկայի կամ գործարանի բանվորները: Ամենից շատ շահագրդոված են այն բանվորները, վօրոնք անընդհատ թելերով կապված են այդ ճաշարանի հետ, իրեն բանվորական կողեկտիվ, քան այն առօնձին մարդիկ, վորոնք նրանում ճաշում են: Դորջը հնաց այդպիս ել պետք և կազմակերպել վորպեսզի ամեն որ ճաշարանի կյանքին հակեն բանվորներն այն ֆարբեկայի, վորը շահագրդոված եր ճաշարանի տշխատանքի բարեկալավածն գործով: Այդպիսի մոտեցումը միանգամից հնարավորություն կտա ճաշարանային հանձնաժողովը պլանային կարգով ծավալել և մինչև վերջը հասցնել իր աշխատանքը: Ճաշարանային հանձնաժողովը կազմակերպելիս կարեռ և ներս քաշել բանվորների նոր շերտ, վորը գենես ծանրաբեռնված չե այլ հաստրակական աշխատանքով, այդ հանձնաժո-

դուի գլուխը կանգնեցնելով կոռպերատիվ ակտիվից մեկ յերկու ընկերների: Ճաշարանային հանձնաժողովն իրեն հիմնական ննդիր և առաջադրում բանվորական ճաշարանի վրա անմիջական հսկություն և դիտություն ունենալ, այլ և մոտակա ֆարբիկայից ամեն ահսակի ոգնություն կտղմակերպել:

Ճաշարանային հանձնաժողովի անդամները աշխատանքի պրոցեսում հասարակական սննդի կազմակերպման բավականաչափ փորձ և վերիքներ են կուտկում. և հատակայում ճաշարանային հանձնաժողովի անդամներից կարելի յե սահմանափակ այնպիսի մարդիկ, վորոնք ի վիճակի կլինին աշխատել հասարակական սննդի բնագավառում, ճաշարաններում և խոհանոց-ճաշարաններում:

Սակայն չե վոր բացի միմիայն ճաշարանի մասին հոգ տանելուց, անհրաժեշտ ե տվյալ բանվորական ուսումնաւում կամ քաղաքում ավելի լայն կերպով մուտքային հասարակական սննդի գործին: Միմիայն մեկ վոր ժարանի կամ ֆարբիկայի ճաշարանային հանձնաժողովին այդ արդեն այդ ինքնուրից գլուխ արդեն այդ ինքնուրից գլուխ հանել չի կարող: Գետք և կարողանալ ճաշի առնել հասարակական սննդի վերաբերյալ բանվորների բոլոր կարբքները, պետք և կարողանալ այս կամ այն հատկացումները մտցնել այդ գործի զարգացման մեջ, պետք և ոգնել ճաշարաններին առաջին անհրաժեշտության մթիքներ մատակարարելու մեջ, և ի հարկի, այդ ինքնուրից գլուխ կարող և հանել միմիայն քաղաքային խորհրդին կից դոյություն ունեցագ հասարակական սննդի սեկցիան կամ յենթասեկցիան:

Այն տեղերում, վորակ հասարակական սննդի

ցանցը բավականաչափ զարգացած ե, կամ վորտեղ խոհանոց գործարան գոյություն ունի, այնուղի անհրաժեշտ և կազմակերպն հասարակական սննդի ինքնուրույն սեկցիա:

Դպրոցական աշխատանքի հարցերով հետաքրքր վում և ժողովրդական կրթության սեկցիան, առողջապահության հարցերով՝ առ բաժնի սեկցիան, բանվորների խանությունն ցանցով՝ կոռպերացիան—կոռպերատիվ առևտուրական սեկցիան: Միմիայն հասարակական սննդունդն և քաղաքային խորհրդի գործունեյությունը դուրս մնում: Դրանք գատարկ խոսքեր չեն: Խորհրդային հանրապետությունների ամբողջ Միության մեջ գոյություն ունեցին հասարակական սննդի միմիայն յերեք յենթասեկցիա, ըստ վորում նրանց աշխատանքը չտափազանց թույլ եր ձիշտ և, Պենգայում հասարակական սննդի յենթասեկցիան բավականաչափ աշխատանք եր կատարել, սակայն այդ միմիայն մի յեզակի գեղք և, վորն իրավունք չի տալիս այդ գործում հաջողություններ մատնանշելու:

Միմիայն այն ֆարբիկանների և գործարանների բանվորները, վորոնք շահագրգոված են իրենց ճաշարանների կազմակերպմամբ և եյանքով. հանդիսանում են այն կազմակերպ, վորոնք կարող են ամենից ոպտակար լինել: Վորովինեան քաղխորհրդի սննդամները հանդիսանում են իրեն խորհրդային իշխանության ներկայացուցիչներ, նրանց՝ հասարակական սննդի յենթասեկցիայի մեջ միացածների պարտականությունների մեջ պետք և մտնի՝ ճաշարանային հանձնաժողությունը, ճաշարանների գործունեյության, պլանային հետազոտությունը

հասարակական սննդի նոր ձեռնարկութմների մշակումը, ճաշարաններին մթերքներ հայթայթելու հոգսը և լայն մասսաների մեջ հասարակական սննդի գործի համար կենդանի ագիտացիա մղելը: Քաղաքային խորհրդին կեց գոյություն ունեցող հասարակական սննդի սեկցիան ճաշարանների և խոհանոց-գործարանների շուրջը բանվորական հասարակայնություն կազմակերպելու գործում յերկրորդ անհրաժեշտ աստիճանն է: Սակայն այդ յերկու ձևերով հասարակական սննդի գործը բավարարվել չի կարող: Մնում ե պլանային աշխատանքը, միջացներ ճարելու աշխատանքը—վոչ միայն քաղաքային խորհրդի, այլև արդյունաբերության և բանվորների կենցաղը բարելավելու տեղական ֆոնդերի ու կոռոպերացիայի—և նոր ճաշարաններ կազմակերպելու հարցերը, տվյալ բանվորական ռայոնի շուկայի ծավալը մշակելու հարցերը: Այդ արդեն ավելի ընդհանուր խնդիրները պետք ե դրվեն տեղերում հասարակական սննդի գործին ոժանդակող կոմիտեյի վրա: Աջակցության կոմիտեների կարճ ժամանակվա գոյության աշխատանքի փորձը արդեն ցույց ե տվել նրանց ամբողջ կենսունակությունն ու անհրաժեշտությունը: Վերցնենք թեկուղ իվանովո-Վոզնեսենսկի որինակը: Ծնորհիվ մեկ Փարբիկայի կառուցման աջակցության կոմիտեյի իվանովո-Վոզնեսենսկին անցավ յերկրորդ Փարբիկան բացելուն՝ Ռոդնիկայում և նույնպես նոր յերեք միավորների կառուցելուն—Ծույում, Կինեշմում և Վիչոնդում: Ծնորհիվ աջակցության կոմիտեյի աշխատանքի ստեղծվեց հասարակական սննդի ձեռնարկությունների մի յուրահատուկ բուն: Մինչև այժմ աջակցության կոմիտեները կազմակերպված են այն-

պես, վորպեսզի կարելի լինի լուծել միմիայն մեր առաջ դրված հիմնական խնդիրը—հասարակական սննդի իբրև կատարելապես նոր գործի, զարգացման համար միջոցներ գտնելու խնդիրը: Ներկա մոմենտում, յերբ դրվում ե վոչ միայն կառուցելու հարցը, յերբ դրվում են հասարակական սննդի զարգացման գործում համապատասխան պլանի մշակման հարցերը, անհրաժեշտ ե մի փոքր այլ տեսակի աջակցության կոմիտեներ ստեղծել: Տեղերի պրակտիկայում գերակշռում են ամեն տեսակի կազմակերպությունների—գործկոմի, քաղխորհողի, կոոպերացիայի, պլանային մարմինների և այլն/ներկայացուցիչներից կազմված աջակցության կոմիտեները: Ներկայիս հիմնական խնդիրն ե արդին այդ կազմի մեջ մտցնել գաղգրահի բանվորների նոր կադրեր:

Միանգամայն բնական ե, վոր այդ բանվորները իրենց հիմնական միջուկով պետք ե լինեն արդեն հասարակական սննդի սեկցիայում աշխատող քաղաքային խորհրդի անդամներ, Այդ ժամանակ նրանք իրենց աշխատանքի ամբողջ փորձը կրերեն աջակցության կոմիտեն և զրանով գործին ամենամեծ ոգուտը կտան:

Այդպիսով խոհանոց գործարանների և ճաշարանների շուրջն իբրև կազմակերպված բանվորական հասարակայնության յերեք հիմնական ձեռք են հանդիպանալու՝ ճաշարանային հանձնաժողովը, հասարակական սննդի սեկցիաներն ու յենթասեկցիաները և աջակցության կոմիտեները:

Այնպիսի ռայոնի համար, վորտեղ խոհանոց-գործարաններ չկան և կա միայն ճաշարանների ճյուղականական վարչական գորված ցանց, այդպիսի ձեռ միանգամայն բավական

ե. իսկ այնահեղ, վորտեղ կա խոհանոց-գործարան, անհրաժեշտ ե խոհանոց-գործարանի շուրջն ստեղծել հասարակական մարմին—ճաշարանային հանձնաժողովներ—նույն անդամների թվից, վորոնք զուրս են բերված բաշխիչներին կից զոյություն ունեցող ճաշարանային հանձնաժողովներից։ Աշխատանքի այս փորձը դու չափազանց նոր ե, սակայն նա իվանովո-վողնեսինսկում արդեն ցույց ե տվել իր կենսունակությունը։ Վերջին յերեք ամիսների ընթացքում իվանովո-վողնեսինսկում բաշխիչների շուրջն ըստեծված ե ճաշարանային հանձնաժողովների ցանց և իր խոհանոց-գործարանի շուրջը ճաշարանային հանձնաժողովների անդամներից ստեղծված ե աջակցության բջիջ։ Այդ բջիջն ունենում ե պլենումներ, վորտեղ մըշակման են յենթարկվում թե բաշխիչների, և թե խոհանոց-գործարանի բոլոր հարցերը և այդ իրական հնարավորություն ե տալիս բաշխիչների ունեցած բոլոր թերությունները անմիջապես կտրել խոհանոցի աշխատանքների հետ։

Գ Լ Ո Ւ Խ Վ

ՃԱՇԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Բանվորական հասարակայնության ստորին ողազը—ճաշարանային հանձնաժողովը—ամենակարևոր ողակն ե։ Այդ ողակը չունենալու դեպքում անհնար և ճաշարանների աշխատանքը ճիշտ հիմքերի վրա զնել Մրանից առաջ արդին տալիս է, վոր ճաշարանային

հանձնաժողովներ պետք ե կաղմակերպել անմիջապես այն ձեռնարկություններում, վորոնց սպասարկում ե ավյալ ճաշարանը։ Սակայն և ննարավոր ե այնպիսի մի դրություն, յերբ միենույն ճաշարանը սպասարկում ե մի քանի զանազան ձեռնարկությունների։ Ի՞նչ պետք ե անել ավյալ դեպքում։ Այդ ժամանակ պետք ե վարչել այսպես, ներկայացուցիչներին վերցնել կու գործարաններից, իսկ հիմնական միջուկը վերցնել այն գործարաններից, վորը ավյալ ճաշարանում ամենից շատ ճաշողներ ունի։ Նույն այդ գործարանից անհրաժեշտ կլինի ճաշարանային հանձնաժողովի կազմի մեջ մտցնելնաև Փաբրիկա-գործարանային կոմիտեյի ներկայացուցիչներին։ Ճաշարանային հանձնաժողովի կազմի մեջ պետք ե մտնեն այն բանվորներն ու աշխատավորները, վորոնք առաջուց ուրիշ աշխատանքի հետ կապված չեն։ Շատ ավելի լավ կլինի ստեղծել եր սեփական ակտիվը, վորը ծանրաբեռնված չլինի մի այլ աշխատանքով։ Հանձնաժողովի անդամների քանակը վորոշվում է տեղում 7-ից մինչև 13 մարդ, նաև հասարակական մննդի ձեռնարկությունների ուժին և սպասարկությունների քանակին։ Որինակի յեթե ճաշարանը սպասարկում ե յերեք ձեռնարկության, պետք ե վերցնել 15 մարդուց վոչ պակաս, այսպես, վոր յուրաքանչյուր ձեռնարկությունից 5 մարդուց պակաս չլինի։

Հանձնաժողովի գլուխ պետք ե կանգնած լինի յեռայակը՝ կաղմված գործարկոմի, ձեռնարկության, կանանց հանձնաժողովի և կոմիտեմիության ներկայացուցիչներից։ Իսկ ինչպես պետք ե ընտրել մնացած կազմը։ Դրա համար առաջին հերթին պետք ե հրա-

վիրել ճաշարանների կյանքով հետաքրքրվող բանվորների ընդհանուր ժողով, և այդ ժողովում ընտրել հանձնաժողովի մնացած անդամներին: Անհրաժեշտ ե ամեն գնով աշխատել, վոր հետազայռում ճաշարանային հանձնաժողովների անդամները հաշվետու լինեն այն բանվորների առաջ, վորոնք իրենց ընտրել են և ճաշարանի կյանքին նրանց տեղյակ պահեն: Այն դեպքում, յերբ ճաշարանը շատ խոշոր ձեռնարկություն ե սպասարկում, ձեռնորու յե ընտրությունները կատարել ցեխային ժողովներում, նախորոք այդ խնդիրը համաձայնեցնելով Փարբիկա-դործարանային կոմիտեների հետ: Հստ վորում անհրաժեշտ ե մտածել, վոր բանվորներն ընտրվեն զանազան հերթափոխություններից:

Սակայն շատ հաճախ այնպես ե պատահում, յերբ ճաշարանն ամրացված չի լինում վորեն ձեռնարկության, և նրա հաճախորդների կոնտինգենտը խիստ բազմազան է լինում: Այդ դեպքում անհրաժեշտ ե առաջիւ տեսակետից նահանջել և բավականանալ ճաշողների ժողովից ընտրված ճաշարավային հանձնաժողովի ընարություններով, ըստ վորում ճաշարանային հանձնաժողովի կազմի մեջ պիտք ե մտցնել քաղաքային խորհրդին կից հասարակական սննդին կից հասարակական սննդի սեկցիայից մի պատգամավոր և հանձնաժողովի կազմի մեջ մտցնել այդ սեկցիային ամրացված մի պատգամավորուհու: Միաւ կլիներ ընտրված ճաշարանային հանձնաժողովին փակել իր անդամների նեղ ըրջանակում: Այդ պատճառով ճաշարանային հանձնաժողովին իրավունք ե արվում կոռպատցիայի կարգով իր կազմի մեջ ընդունել ճաշող-

ներից կամ բանվորների կանանցից մի քանիսին, վորոնք կցանկանան մասնակցություն ունենալ ճաշարանային հանձնաժողովի աշխատանքին:

Ճաշարանային հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքը վարում են անհատորեն, իրենց հիմնական աշխատանքից դուրս յեղած աղատ ժամանակ՝ ճաշարանում հերթապահություն ունենալու միջոցով, իրեն հասարակական կամավոր աշխատանք, չստանալով դրա համար լրացուցիչ վարձատրություն: Ճաշարանային հանձնաժողովը յեղած փորձի, ճաշարանի կյանքի վերաբերյալ դիտողությունների փոխանակման, ճաշարանում գործել կազմակերպվելու հետ կապված բոլոր հարցերը մշակման յենթարկելու համար հրավիրում ե իր պլենումները: Այդպիսի պլենումներ հանձնարարվում ե հրավիրել տարեկան չորս անդամից վոչ պակաս: Ճաշարանային հանձնաժողովները պետք ե իրենց կյանքը սերտությունների հետ, վորպեսդի կարողան խորհրդակցությունների հետ, վորպեսդի կարողանան ամբողջ սպասարկող անձնակազմին քաշել ճաշարանը լավացնելու աշխատանքի մաջ: Այդ հանգամանքը փոխադարձ ձիւս հարաբերություն ե սահմանում ճաշարանին սպասարկող անձնակազմի և ճաշարանային հանձնաժողովի միջև:

Ճաշարանային հանձնաժողովին պետք ե պարզ լինի իր աշխատանքի նպատակը, և նա պետք ե այդ անձի իր պիտի լավ վորոշի: Դրա համար աշխատանքում իր դիրքը լավ վորոշի: Դրա համար այդ հանձնաժողովը պետք ե տեղյակ լինի այն խընդիրներին, վորոնք զբարում են հասարակական սննդի դիրներին, վորոնք զբարում են հասարակական սննդի առաջարկին, վորոնք զբարում են հասարակական սննդի առաջարկին:

այդ խնդիրները: Ժողովրդական կոմիսարների և որ-
հուրդը հիմնական խնդիր ե դրել սնունդը մոտեցնել
աշխատավորների բյուջեյին: Հետեւապես ճաշարանա-
յին հանձնաժողովի խնդիրը պետք ե լինի հետեւ,
վորպեսզի գները ճաշարանում չըարձրանան, և աշխա-
տանքի ամբողջ սիստեմը ուղղված լինի այդ գների
իշեցնելուն: Տարեց տարի սոցիալիզմի շինարարու-
թյունը բանվորների ուժերի ել ավելի լարում ե պա-
հանջում: Աշխատանքի արտադրականության հետ
սերտ կերպով կապված ե բանվորի ստացած կերակրի
վորակն ու արժեքը: Ճաշարանային հանձնաժողովի
առաջ խնդիր ե դրված հատուկ ուշադրություն դարձ-
նել բանվորներին բաց թողնվող կերակրի վորակի և
արժեքի վրա: Զպետք ե թույլ տալ, վոր բանվորը
սահմանված բաժնից պակաս ստանա, չպետք ե թույլ
տալ, վոր բանվորն արտադրության վրա վատնած իր
ուժերը չվերականգնի: Ժողովրդական կոմիսարների
Խորհուրդը խնդիր ե դրել մեր ճաշարանների առաջ
յերեխաններին սպասարկել: Ճաշարանրյին հանձնա-
ժողովները պետք ե իրենց ճաշարանի առաջ հարց դը-
նեն յերեխաններին տաք նախաճաշ տալ կամ բանվոր-
ների յերեխանների համար կազմակերպել հատուկ ման-
կական բաժին, իսկ իր ձեռնարկության մեջ հարց
դնել զրա համար միջոցներ դանելու: Ճաշարանային
հանձնաժողովի անդամներն այդ նույն հարցերը
պետք ե ցածրից տուաջ մղեն բաղաքային խորհրդում:
Բայց խնդիրը միմիայն բանվորին կերակրելը չե: այլ
այն, վոր կարելի լինի հասարակական սնունդը մըտ-
ցնել բանվորական ընտանիքների մեջ:

Այդ տեսակետից «Ժողովնունդ»-ն ուսումնասի-

րում ե բանվորական ընտանիքներին արտօնյալ գնե-
րով ճաշ բաց թողնելու հարցը բայցի դրանից, ճաշա-
րանների վարչությունը պետք ե տնտեսական մար-
մինների առաջ հարց հարստցի ի հաշիվ բանվորների
աշխատավարձի արտօնյալ գնով ճաշի տալոններ բաց
թողնելու մասին: Սակայն գործնականում ձեռնարկու-
թյունների տնտեսավարները արգելք են հանդիսանում
այդ բանը կյանքում անցկացնելու, չնչին բանակու-
թյամբ տոմսեր են գնում, նրանց արժեքի գանձման
ժամկետներ չեն նշանակում, այլ ուղղակի տալոնների
արժեքը գույք են դալիս հենց առաջին աշխատավա-
րից (Իվ.՝Վազնեսինսկ): Մյուս կողմից ճաշարանների
աղմինիստրատորները սիրով չեն գնում այդ ձեռնար-
կությանը, տալոնները վերավաճառելու ժամանակ յե-
ղել են չարարկումների գեղաքեր: Ճաշարանային հանձ-
նաժողովները պետք ե այդ խնդրով լուրջ զբաղվեն և
իրենց արհկազմակերպության միջոցով այդ հարցը
մտցնեն ձեռնարկությունները: Դրա հետ միասին պետք
ե վոչ միայն անշեղորեն հետևել վորպեսզի ճաշարան-
ների տնտեսավարները կատարեն այդ կարգադրու-
թյունը, այլ դրա հետ միասին ճաշի արժեքի այնպի-
սի կալկուլացիոն կատարել վորպեսզի կարելի լինի
տուն տարվող ճաշերի քանակի համեմատ ճաշի գինը
զեղչել: Այդ հարցերը դեռ բավականաչափ ուսումնա-
սիրված չեն: տեղերում անհրաժեշտ ե նրանց վրա
լուրջ ուշադրություն դարձնել և իր նախաձեռնությու-
նը յերեան բերել:

Այդ բանում առանձնապես մեծ ոգնություն կա-
րող ելին թույլ տալ աշխատավորուհները: ահա թե
ինչու առանձնապես կարեռ ե ճաշարանային հանձ-

նաժողովների անդամների թվի մեջ ավելի շատ աշխատավորունիներ քաշներ չաճախ ճաշարանների ղեկավարները զուրկ են լինում նախաձեռնությունից և ճկունությունից: Վերցնենք այսպիսի մի որինակ: ոգոստոսի կեսին սկսում է ձմերուկը շուկա յեւ գալիս: Զմերուկն արժինում է 20—30 կոպ: Բանվորի համար դժվար է ամեն որ ձմերուկ առնելը, թեև բոլոր շուկաներում լիքը ձմերուկ է, իսկ յերբ մեր ճաշարաննես մտնում, այստեղ ձմերուկի հուսն անդամ չկա: Մեր վարիչը չի մտածել, վոր կարելի յեւ եժան դնով մի պարտիա ձմերուկ գնել և առանձին բաժիններ անելով բաժինը Յ կոպեկով ծախել, վորը չափազանց աշորժելի կրաքաներ ճաշը: Նույնը նաև պառզների սեղոնին, ձկնեղենի սեղոնին և այլն: Այստեղ ճաշարանային հանձնաժողովի անդամները կարող են յերեսն բերել ստեղծագործական նախաձեռնություն և զրդել վարիչին ճաշարանի աշխատանքի մեջ զգալի բարեկավուներ կատարելու:

Ամենից առաջ աշխատանքը պետք է այնպես կազմակերպել, վարպեսզի ճաշարանային հանձնաժողովները կարողանան աշխատանքի և որապեսնությունների ճիշտ բաշխման միջոցով անդադար դիտել հաստակական սննդի ձեռնարկության կյանքը: Ինչպես պետք է այդ բանը կատարել: Գործը ճիշտ հիմքերի վրա գնելու համար անհրաժեշտ է, վոր ճաշարանային հանձնաժողովը այդ աշխատանքի վերաբերյալ բոլոր կարգադրություններին և հրահանգներին տեղյակ լինի: Այդ հանձնաժողովը պետք է գիտենա այն, ինչ վոր տնտեսավորը և այդ աշխատանքում ձևոք բերի տնտեսական հմտություն: Վերջին ժամանակներս

Մուկվայում բացվել են ճաշարանային հանձնաժողովների աշխատավորների դասնթացներ: Այդ չափազանց ոգտակար մի նախաձեռնություն եւ Այդ դասնթացների ծրագիրը մեծ չե, սակայն նա գաղափար և տալիս մթերքները պահպանելու, հասարակական սննդի խնդիրների, ձեռնարկության ոգտագործման մասին և դրանով, իհարկե, հանձնաժողովի անդամներին հնարավորություն և տալիս ծանոթանալ այն աշխատանքին, վոր կատարում և ճաշարանի վարչությունը: Այդ դամբնթացները հանձնաժողովի անդամների մեջ առաջ են բերում հսկայական հետաքրքրություն, և այդ բացարկում և նրանով, վոր միմիայն այդ դասընթացները կարողացան նրան չ ցույց տալ թե ինչպես և ինչ պետք է անեն նրանք:

Պետք է աշխատել, վոր ճաշարանային հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքն այնպիս բաշխել, վորպեսզի նրանք ճաշարանի բոլոր շենքերում ել լինեն: Նրանք պետք է հսկողություն ունենան թեխոհանոցի վերաբերյալ, թե պետք է լինեն մառանում, պետք և հսկեն, թե ինչպես են պահպանվում մթերքները, ապրանքը ճիշտ և գարսպած, շենքը չմրել, թե վոչ, մառաններում ողի հոսանք կա, Նրանք պետք է մթերքները կաթսայի մեջ քցելիս, բաժինները բաշխելիս ներկա գտնվին: Ճիշտ հիմքերի վրադրված բանվորական հսկողությունը կարող է ամբողջովին հրապարակ հանել այն գողությունները, վորոնք դեռևս շարունակ մեր ճաշարաններում տեղի յեն ունենում:

Ճաշարանային հանձնաժողովները պետք և ընդունեն այն բոլոր լուղոբները, վորոնք ամենից առաջ

անցնում են ճաշարանային հանձնաժողովների ձեռքով։
Ճաշարանային հանձնաժողովների անդամները առանձ-
նապես իրավունք ունեն քննություն թե արկղ մտնող և
թե անձամբ ձեռքը հասնող բոլոր բողոքները, պետք
և առաջին հերթին միջոցներ ձեռք առնել, վոր-
պեսզի այդ բողոքները քննվեն և անհետնանք չը-
մընան Բացի դրանից, նրանք պետք և ղեկավարեն
նաև իրեն՝ սպառողին։ Հաճախ և պատահում, վոր-
սպառողը միանդամայն անիրազործելի պահանջներ և
անում, և յերբեմ ել խուլիգանավարի յի իրեն պա-
հում ճաշարանում, Մանավանդ հաճախ են պատահում
այսպիսի գեպքեր, ճաշարանի վորեև աշխատողի ծա-
ռայությունից հեռացնում են, ուղարկում են աշխա-
տանքի բորսա, իսկ քիչ ժամանակից հետո նա գալիս
և ճաշարան, սկսում և այնտեղ կոկի բարձրացնել,
յերբեմ ել զորեև պատճառ և հասրում վարկարեկելու
այն ճաշարանը, վորտեղ ինքը առաջ աշխատել և
Այստեղ ճաշարանային հանձնաժողովի ինդիրն այն և,
վոր նա կարողանա քաղաքավարի և հանդիսա կերպով
հանգստացնել բողոքող սպառողին, վորպեսզի նրան
մերկացնի, և հարկ յեղած գեպքում ճաշարանից գուրս
քերել նրան, յեթե նա անկարգություն և խուլիգա-
նություն և անում։

Զափազանց կարեոր և նույնպես ճաշարանային
հանձնաժողովներ կազմակերպելու նենց սկզբին. հանձ-
նաժողովների անդամներին բացատրել վարչության
նկատմամբ իրենց ունեցած պարտականությունները
և իրենց աշխատանքների բնույթը։ Այդ անելու հա-
մար պետք և ամենից առաջ յուրացնել այն հիմնական
կանոնը, թե ճաշարանային հանձնաժողովի անդամ-

ները իրավունք չունեն խառնվելու վարչական կար-
կագրություններին։ Յեթե նրանք վորեև սիալ բան
են նկատում, պետք և յուրաքանչյուր բանվորի նկա-
տողություն չանեն։ Նրանք պետք և իրենց զիտողու-
թյունները միմիայն հայտնեն այն ավագին, վորի
տրամադրության տակ և գտնվում տվյալ աշխատան-
քը, վորպեսզի համապատասխան միջոցներ ձեռք
առնվեն։ այլապիս կարող են հանձնաժողովի անդամ-
ների և աշխատողների միջև ընդհարություն առաջա-
նաւ, ինչ դընաց վոչ մի ոգուտ չկա։

Յեկ վերջապիս, ճաշարանային հանձնաժողովի
անդամներին պետք և հիշեցնել, վոր նախքան գործի
քննությունը չպետք և աղմուկ բարձրացնել, թե չե-
ճաշարանային հանձնաժողովի անդամներն այդպիսի
հիվանդություն ունին։ Նրանք վորեև փաստ նկատեին,
առանց նրան լավ ընսելու, իրենց անփորձության
սկառածառով։ առանց վորեև չարամտադրության աղմուկ
են բարձրացնում, մինչդեռ բոլորովին հարկավոր չեր
այդպիս վարվել։

Այդպիսով հենց աշխատանքի սկզբից ճաշարանային
հանձնաժողովների անդամները պետք և լավ հրահանգ-
վեն, իսկ նրանց պարտականությունների միջև սահ-
մանագիծ անցկացնել, և նրանք պետք և պիտինան,
թե ինչ մեթոդներով պետք և աշխատեն։ Այդ գործին
հետեւ տնտեսավարների հիմնական ինդիրն ե, և
յեթե այդպիս լինի, այդ գեպքում տնտեսական մար-
մինների և ճաշարանային հանձնաժողովների աշխա-
տանքում հետագայում վոչ մի թյուրիմացություն չի
կարող լինել։

Յուրաքանչյուր կոոպերատիվ ունի իր վերստու-

գիշ հանձնաժողովը: Վերստուգիչ հանձնավորված ունի իր խնդիրներն ու իր աշխատանքի ընույթը, սակայն տվյալ ռայոնական կոոպերատիվին կից գոյություն ունեցող ճաշարանային հանձնաժողովի և վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքի մեջ պետք ե անպայման վորոն կապ լինի, վորը պետք ե անցնի վերստուգիչ հանձնաժողովի կողմից՝ ճաշարանային հանձնաժողովին իրի անդամներին արվող առաջարությունների գծով. որինակի, վերստուգիչ հանձնարողովը պարզում ե պահեստում մթերքների չորանալու և փշրվելու մեծ տոկոս, վորը որինական նորմայից անցնում է: Վերստուգիչ հանձնաժողովը այդ անց ե կացնում իր ակտիվի մեջ, սակայն նա չի կարող հասկանալ այդ յիշութիւնաջ գալու բոլոր պատճառները: Այդ գեղըում նա հնարավորություն ունի հանձնարարել ճաշարանային հանձնաժողովին պարզել այդ պատճառները և հետագայում հետեւ իր վորոշումը կատարելուն, և ճաշարանային հանձնաժողովը պետք ե այդ բանը կատարի: Սակայն բացի այն խնդիրներից, վորոնք անմիջապես կապված են արտադրության հետ, բացի այն մոմենտի ուսումնասիրությունից, վորոնք անմիջապես կապված են մթերման խոհանոցային տնտեսության, պահեստի տնտեսության հետ, ճաշարանային հանձնաժողովը պետք ե վերահսկի մթերքները կաթսայի մեջ քցելու և հետեւ, վորպեսդի պահեստի տեղեկագիրը, վորն ամեն որ գրվում ե, ամբողջապես համապատասխանի բաց թողնվող մթերքների քանակին: Շատ հաճախ ե պատահում, վոր տեղեկագրում գրված են լինում ուրիշ մթերքներ, իսկ բաց են թողնում այլ տեսակի մթերքներ, և այդպիսի փոփոխումը վոչչով չի

նկատվում, վորի հետեւանքով պահեստն ստուգելիս յերեան են գալիս, թե պակասորդ և թե ավելորդ: Այնուհետեւ ճաշարանային հանձնաժողովը պետք ե հետեւ մթերքը մինչև կաթսան հասնելուն և մթերքը կաթսայի մեջ քցելուն՝ համաձայն սահմանված նորմաների: Բացի գրանից այդ հանձնաժողովը պետք ե հետեւ, վոր սպառողն ստանա իրեն հասանելիք լրիվ բաժինը: Այդ աշխատանքն առանձնապես կարենու և, վորովհետեւ մարդու առողջության համար այնքան լուրջ նշանակություն ունեցող հասարակական սննդի հիմնարկություններում տեղի ունեցող գողությունն ավելի մեծ հանցանք ե, քան տեքստի ձեռնարկության կամ մթերքների խանութում կատարվող գողությունը: Իզուր չե. վոր «Փողմնունդ» բաժնետիրական ընկերությունը վորոշում ե կայացրել միջնորդություն հարուցել համապատասխան մարմինների առաջ հասարակական սննդի ձեռնարկություններու մտեղի ունեցաղ շարարկության համար խստացնել քրեյական պատասխանավությունը:

Ճիշտ հիմքերի վրա գրված վերահսկողությունը հակայական նշանակություն ունի մեր սպառողին բավարարելու և ճաշարաններում աշխատանքը լավացնելու տեսակետից:

Ճաշարանային հանձնաժողովը կարող ե հսկայական նշանակություն ունենալ նաև գործը ռացիոնալ հիմքերի վրա դնելու տեսակետից, և այստեղ առաջին տեղում գրվում ե ցեխերի հարցը: Սպառողի շահեակետից ճաշի գինը վորոշելը հսկայական նշանակություն ունի, և մեր ճաշարանային պրակտիկայում մենք մի շարք խայտառակություններ ենք տեսնում:

Ամեն ռայոնում հլ կարելի յե նկատել դեպքեր, յեսը միմյանցից մեկ կվարտաւէ հեռավորության վրա գըտնվող ճաշարանները միատեսակ գներ չունեն: Շիշտ և, «Ժողովանդի» վերահսկողությունը յենթակա ձեռնարկություններում գները նշանակվում են պայմանագրերով, սակայն ճաշարանները գործադրում են զների թանդարձման զանազան միջոցներ, որինակ, առանձին տեսակի բաժինները գնահատման յենթարկելու միջոցով: Մի քանի ճաշարաններ մտածել են որպաշնթացը մի իրենց համար հետաքին ճաշեր տալ 2—3 ժամ, իսկ մյուս ժամերին եժանագին ճաշ ճաշել չեն կարող: Ճաշարանային հանձնաժողովները պետք են հետեւն, վորպեսզի այդ բանը թույլ չտան, վորպեսզի ճիշտ գները նշանակվին, վորպեսզի այդ գներում թըստիշքներ տեղի չունենան, բացի գրանից, նրանք պետք են հետեւն նաև իրենց ռայոնի մյուս ճաշարանների գներին և շուկայի գներին ու նրանց համեմատել, իսկ այդ համեմատությունը հնարավորություն կտա նրանց վորոշելու, վոր նրանց ճաշարանում մրգերին, պանրին, յերշիկին, հավկիթին, չափազանց բարձր գներ են նշանակել և վոր կարերի յե այդ գներն իջեցնել: Մենք հանդիպում ենք նաև այնպիսի փաստերի, յեր փախանակ ամեն կերպ նպաստելու ալկոհոլ չունեցող խմիչքների տարածմանը, տանձին ճաշարանները, կվասը տնտեսավարական յեղանակով պատրաստելով, այդ կվասը ծափում են այնպիսի գնով, վոր սպառողը գարեջրից ձեռք չի քաշում:

Հասարակական տեսակետից, մեր խնդիրների տեսակետից այդ միանգումայն անպետք եւ Մեր նպատակը բոլորովին այն չի, վոր սպառողի գրպանից

կորզինք նրա վերջին կոպեկը մտցնենք հասարակական սննդի ձեռնարկության գրամարկղը, այլ այն, վոր եթան կերակուր և խմիչք տանք բանվորին: Մենք ոգուտ քաղելու այդ սիստեմից երաժարվում ենք, հենց այդ պատճառով ել արտոնություններ են արվում հասարակական սննդին, վոր նա ոգուտ քաղելու ուղիղ չի ընթանում: Ճաշարանային հանձնաժողովովների խնդիրն այն եւ, վոր նրանք յուրացնեն այդ գրությունը և հիշեն, վոր Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ գոյություն ունեցող 1000 հատրային ճաշարանների՝ հասարակական սննդին հատկացված արտոնությունները պետական բյուջեից տառիկան խլում են 3 միլիոն ուռւբի, Այդ պատճառով ճաշարանային հանձնաժողովները պետք են ամեն կերպ կովեն ոգուտ քաղելու վասնգավոր թիքման գեմ: Ինարկե, ճաշարանային հանձնաժողովների խնդիրների մեջ մտնում են նույնպես ավելորդ վերադիր ծախսերի գեմ կովելու խնդիրը, վորպեսզի ձեռնարկությունները վնաս չկը են:

Ճաշարանային հանձնաժողովները հսկայական նշանակություն կունենան այնտեղ, վորտեղ մեքենա սարքավորում կա: Բոլորն ել գիտեն, թե ինչ հսկայական նշանակություն ունի մեքենան մաքուր հսկայական սննդի գործում այդ պահելը, իսկ հասարակական սննդի գործում այդ առանձնապես կարևոր եւ Որինակ, յեթե լուցկու գործում լուցկու տուփեր պատրաստող մեքենաները չմաքրեն, մյուս որը գրանը տուփերը կջարդեն: Իսկ յեթե միս աղացող մեքենան չմաքրեն, և այնտեղ կեղտ, ճեր, մսի կտորտանք հավաքվեն, իսկ հետո յերբ այդ մեքենայով նոր միս աղացվի, յերեվակա-

յեցեք, թե ինչ կստացվի: Մոսկվայի ճաշարաններից մեկում տերմոսի մեջ գտել են կենդանի ճիճուներ: Յեկ զարմանալի չե, վոր այդ ճաշարանում սուպի միջ ճիճուներ եյին գուրս գալիս: Ճաշարաններից մեկում սկսել են բողոքել, թե շոգեկաթսան վատ և աշխատում. ստուգել են այդ բանը, և պարզվել է, վոր լցված և կերակրի մնացորդներով, — և ել ինչ ասես, վոր այստեղ չկար: Ահա թե ինչ և նշանակում այդ գործին չհետեւել: Հաճախ ճաշարանները գանգատվում են մեքենաների սարքին չլինելու և շուտ շուտ փշանալու մասին, և այդ ամենը գլխավորապես տեղի յի ունենում այդ մեքենաներին ճիշտ չհետեւելու պատճառուի:

Ճաշարանային հանձնաժողովը կարող և հետեւ, վոր աշխատանքից հետո բոլոր մեքենաները կարգի բերվեն: և այդ բանը մեքենական սարքավորման համար հսկայական նշանակություն կունենա. Ինարկե յուրաքանչյուր վարիչ առանձնադրես գնահատում և այն ճաշարանային հանձնաժողովին, վորը հետեւմ և մեքենական սարքավորվան հետ ճիշտ վարկելուն և նրան մաքրելուն:

Տեղերին ավելի մեծ ոգնություն ցույց տալու համար ճաշարանային հանձնաժողովների աշխատանքի վերաբերյալ բերվում և հետեւալ հրահանգը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ճաշարանային հանձնաժողովը կատարում և հետեւալ աշխատանքը.

1. Մասնակցում և ճաշարանի պլանի և նախահաշվի կազմելուն և ճաշարանի ներքին կարգ ու կանոնի մշակմանը՝ համապատասխան սպառողների տեղական պայմաններին և պահանջներին:

2. Հետեւում և մթերքները ժամանակին պատրաստելու, ճաշարանի կողմից այդ մթերքների ստանալուն, հատուկ ուշադրություն դարձնելով նրանց լավ վորակի վրա:

3. Հետեւում և մթերքների ճիշտ պահպանելուն՝ մառաններում, պահեստներում, սառցարաններում, պարբերաբար նրանց հետազոտման յինթարկելով:

4. Ուսումնասիրում և սպառողների պահանջը և հաշվի առնված սպառողական պահանջի հիման վրա մասնակցում և ճաշացուցակի կազմելուն և կարգավորելուն:

5. Հետեւում և պահեստից խոհանոց յիկած մթերքներին, այն քանակով, ինչ վոր ցույց և արված գրասենյակի պահանջներում: Հետեւում և, վոր այդ մըս թերքները ծառայեն իրենց բուն նպատակին, հետեւում թերքները վառայն և կաթսայի մեջ դցելուն, համար նրանց վորակին և կաթսայի մեջ դցելուն, համաձայն սահմանված նորմաների:

6. Հետեւում և, վոր սպառողին միմիայն լավ վորակի աղբանք բաց թողնեն, ստուգելով բաց թողնվող բաժինների նորմաները:

7. Հետեւում և սպառողից վերցվող գների և արևական մարմինի կողմից սահմանված՝ ճաշարանի և առաջակուրանաների գների համապատասխան լինելուն:

8. Հետեւում և ճաշարանի աշխատակիցների՝ գեղագիր հաճախորդներն ունեցած վերաբերմունքին, հետեւալ

վում և կերակուրն արագ և ճշտապահ կերպով մատաւ, կարարելուն, ինչպես և ճաշարանի աշխատողների բնուվածությանը, նրանց աշխատանքի արտադրականությանը և նրանց ճիշտ ոգտագործելուն:

9. Հետեւում և հաճախորդների վարմունքին և հասարակական անդորրությունը խանգարելու և խռովանական զանազան արարքների դեպքերում դիմում և միջիցիայի մարմիններին:

10. Հետեւում և մասցորդներն ու թափթփուկները լավագույն կերպով ոգտագործելուն:

11. Մասնակցում և ճաշարանի ճախսների ուսումնասիրությանը, և այլ ժախսները պակասեցնելուն ձեռնարկումների ուսումնասիրությանը, մասնավորապես հետեւում և վառելիքի, լուսավորության և ջրի ուցիունալ ոգտագործմանը:

12. Հետեւում և թե՛ ճաշարանի շենքերը և թե՛ ինվենտարը ժամանակին նորոգելուն, ժամանակին ամանները կլեկելուն:

13. Հետեւում և ինվենտարի խելացի ոգտագործմանը և նրա չփշանալուն:

14. Հետեւում և ճաշարանի շենքերի սանիտարական վիճակին, ինվենտարի մաքրությանը, կերակուրը պատրաստելու և մատուցելու մաքրությանը և հատուկ հագուստի մաքրությանը:

15. Տնտեսական մարմինների առանձին հանձնարարություններով մասնակցում և ճաշարանների հետազոտություններին, կատարում և վերահսկիչ հանձնաժողովի առանձին հանձնարարությունները, վորոնք արվում են տնտեսական մարմինների և անձնաժողովի կատարել, հանձնաժողովի վորոշումները կատարել և ճաշարանային հանձնաժողովների քարտուղարների և անդամների խորհրդակցություններին մասնակցել:

16. Հետեւում և, վոր ճաշարանի վարչությունը լրագրական դիտողությունների վերաբերյալ բացատրություններ տա, ինչպես և ստուգում և վարչության բողոքների գրքերից և տրկներից ստացվող բողոքների վերաբերյալ հաշվետվությունները:

17. Մասնակցում և իր ճաշարանի կուլտուր կը թական աշխատանքների կազմակերպմանը—պատի լը բագրի հրատարակում, բանվորների և ծառայողների (արհմիության հետ միասին) զեկուցումների և դասաւոսությունների կազմակերպում, ընթերցաբանի բարեհնություն, ճաշարանները զեղեցիկ կերպով զարգելը, մանավանդն հեղափոխական տոններին (լողունդարելը, կանաչ, ծաղիկներ, գրոշակներ և այլն):

18. Պարզաբանում և իր ճաշարանի աշխատանքը և իր աշխատանքը՝ թե՛ ընդհանուր կոոպերատիվ մամուլում ու «Փողմնունդ» ֆուրնալում, և թե՛ տեղական պատի թերթերում, Փաբրիկաների և գործարանների ընդհանուր և պատգամավորական ժողովներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Ճաշարանային հանձնաժողովն իր առաջին կազմակերպչական նիստում ընտրում և հանձնաժողովական վարտական կազմակերպության հետ կապ պահպանել, հանձնաժողովների նիստեր հրավիրել, արձագանքներ, հանձնաժողովների կատարել, հանձնաժողովի վորոշումնագրություններ կատարել, հանձնաժողովի վորոշումները կատարել և ճաշարանային հանձնաժողովների քարտուղարների և անդամների խորհրդակցություններին մասնակցել:

2. Իր նիստերում, վոր պետք ե տեղի ունենան
յիրկու շաբաթը մեկ անգամից վոչ պահաս ճաշարա-
նային ևանձնաժողովը լսում ե իր անդամների դեկու-
ցումները, նրանց մեջ աշխատանքի բաշխում կատա-
րելով, քննության և առնում իր ճաշաբանի աշխա-
տանքին, այդ աշխատանքի բարեկավմանը վերաբե-
րող հարցերը և լսում ե ճաշաբանի վարիչի դեկու-
ցումները:

Фианир. — Նիստերի արձանադրությաններն անպայման ուղարկվում են անտեսական կազմակերպություններ:

3. Ճաշարանային հանձնաժողովը կազմում և իր աշխատանքի տարեկան պլանը և նրան կյանքում իրագործում են:

4. Ճաշարանի աշխատանքի վերաբերյալ սիստեմատիկ հսկողություն ունենալու համար ճաշարանային հանձնաժողովն որապահության որերն ու ժամերն իր անդամների մեջ բաշխում ենրանց հիմնական աշխատանքից դուրս յեղած առատ ժամանակներն:

5. Ճաշարանի աշխատանքի հարցերի վերաբեր-
յալ դիտողությունները և առաջարկությունները գրի
առնելու համար ճաշարանի վարիչի մոտ պետք է
պահպի ճաշարանային հանձնաժողովի մատյանը, վար-
տեղ հանձնաժողովի հերթապահ անդամը գրի յի առ-
նում իր սույն ուղարկելու համար:

6. Ճաշարանի և նրա առանձին անդամների աշխատանքություններն ու առաջարկները՝ հանձնաժողովի անդամն իրավունքը ունի այլ մասնիւ

Հայտնել միմիայն ճաշաբանի վարիչն կամ նրա տեղակալին, բայց վոչ թե նրա շարքային աշխատավորներին:

7. Հուրջ թերություններ յերկան քերելու դադ-
քում հանձնաժողովի անդամը, բացի իր զիտողու-
թյունները մատյանում գրելուց, այդ մասին անմիջա-
պես հաղորդում ե անտեսական կազմակերպությանը:

Աշխատանքում հաջողություն ունենալու հասար, աժեհա և, զոր ճաշարանային հանձաժողովը վո- ժամանակի համար կազմի իր աշխատանքի պլանը, նից լավ կլինի յեւամոյակներով՝ այնպես վոր կազ- երպչական ժողովից հետո հենց առաջին պլենումը ողանակ կազմած պլանով կտարաված աշխատանքի ին հաշվառվություն լսել: Բացի գրանից, պիտի ե- տականությունների ճիշտ բաշխում կատարել ձնաժողովի անդամների միջև, ըստ վորում շատ ուր և հաշվի առնել առանձին անդամների կինցա- ին պայմանները և աշխատանքն ու հերթապահու- մանների ժամանակն այնպես բաշխել, վոր հանձնա- ովի անդամները կարողանան այդ աշխատանքը առարել, առանց իրենց սովորական պարապմունքնե- րի պահելու: Այդ չափազանց լուրջ աշխատանք և, ուղիեատ նտ վերջի վերջո վորոշում և հանձնաժո- ղություր անդամների աշխատանքը և հնարավորու- ման չի տալիս նրանց ցըվելուն: Կարեոր և նույն- ու հաշվի առնել թե հանձնաժողովի անդամները ինչ մանակ կարող են հերթապահություն անել, այդ աժամանակի ել կարեոր և հանձնաժողովի կազմի մեջ ընդունակ բանվորներին զանազան հերթափոխություն- րից:

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ

Տեղերի աշակցության կոմիտեները և կենտրոնի աջակցության խորհուրդը՝ հասարակական սննդի շուրջ հասարակական խորհուրդի կազմակերպելու գեղեցիկ ձևն: Հասարակական սննդի դարձացման գործում իր ժամանակին չափազանց խոշոր դեր ե խաղացել Մոսկվայի աջակցության խորհուրդն ընկ. Յյուրուպայի նախադահությամբ. այդ խորհրդի մեջ եյին մտնում պետական նշանակություն ունեցող ամենախոշոր կազմակերպությունների և հիմնարկությունների ներկայացուցիչները: Զնայած, վոր 1926 թ. հասարակական սննդի խորհրդակցությանը Յյուրուպան մտնանշեց, վոր կարելի յեր աջակցության խորհրդից ավելին ըսպասել, քան նա արել ե, սակայն, յիթե քննենք նրա կատարած աշխատանքը, կարելի կլինի վորոշակի կերպով խոստովանել, վոր այդ խոսքերը բղխում են ընկ. Յյուրուպայի համեստությունից: Յեթե մենք ներկայումս հասարակական սննդը պետական տնտեսության ամբողջ սխառեմի մեջ ենք մտցրել, յիթե մեր հասարակական սննդը դրված ե պլանային սկզբունքի վրա, հասարակական սննդը դրանով իր կատարած աշխատանքի հետ միասին պարտավոր ե աշակցության խորհրդին:

Աջակցության խորհուրդն առաջ ե մզել այն բոլոր հարցերը, վորոնք հեշտացրել են հասարակական սննդի կյանքի մեջ մտցնելուն, վերցնենք թեկուզ պետության կողմից ժողոննդին տրվող արտոնություն-

ների հարցը: Այդ արտոնությունները հսկայական խթան են հանդիսացել հասարակական սննդի ծավալելու համար: Կտուավարությունը մի անգամից այն տեսակետի վրա կանգնեց, վոր չի կարելի հասարակական սննդի ձեռնարկությունների ցանցի վրա նայել իբրև առևտրական ցանցի վրա, աջակցության խորհրդի ազգեցության տակ գնահատելով այդ գործի պետական և հասարակական ամբողջ նշանակությունը, վորին պետք ե թույլ տալ արտոնությունների սիստեմով ամրանալու: Աջակցության խորհուրդը կարողացավ կառավարությանը բացատրել, վոր հասարակական սննդի դարձացման համար հարկավոր ե վորոշի իթան և ժողոննդի արտոնությունները հանդիսացան ճենց այդ խթանը: Սակայն բացի դրանից, աջակցության խորհրդի կազմին պատկանող ընկերները աշխատելով ամենաբարձր և ամենապատասխանատու պատերում, պետական ամենամեծ գործում, մտնում եյին հասարակական սննդի գործի բոլոր մանրամասնությունների մեջ և քայլ առ քայլ նկատում եյին, թե ինչպես տեղերում նախաձեռնություններից ձեռքն եյին վերցնում, թե ինչպես այդ նախաձեռնությունը աստիճանաբար միս ու արյուն եր դառնում ե փոխվում եր կենդանի գործի: Այդ բանն աջակցության խորհրդին հնարավարություն եր տալիս ընդհանրապես ամբողջ պետականության խողովակներով հասարակական սննդի հարցերն անցկացնել և միության մեջ հասարակական սննդի գործի գրությունը լավացնել:

Յեթե աջակցության խորհուրդը կենտրոնում այդպիսի խոշոր դեր ե խաղացել պակաս դեր չեն այդպիսի խոշոր դեր ե խաղացել պակաս դեր չեն

իաղացել աջակցության այն կոմիտեները, վորոնք կազմակերպել են տեղերում, վերցնենք թեկուղ մեղ ամենից մոռեկ իվանովո-Վոզնեսենսկի որբնակը: Մենք տեսնում ենք, թե նահանգական գործկոմի նախագա- հությամբ ինչպես ե աշխատում աջակցության կոմի- տեն. այս կոմիտեն սկզբում կառուցում է մեկ խոհա- սարակական սննդի հարցերը առաջ են մղվում իրո- հրդային հասարակայնության բոլոր ողակներով, նա- և անդական գործկոմը զգալի չափով միջոցներ և բաց թողնում հասարակական սննդի զարդացման համար. իվանովո-Վոզնեսենսկի խոհանոց-գործարանից հետո սկսում են կառուցվել վիճուղի և Ռոդնիկովի խոհա- նոց-գործարանները:

Դրանցից յերկուսն արդեն աշխատում են, իսկ յեր- րորդը պատրաստվում է աշխատել: Վերջապես կա- ռուցվում են Շուշի խոհանոց գործարանն ու Սերե- տայի ճաշարանը: Մենք տեսնում ենք, թե ինչպես իվանովո-Վոզնեսենսկի նահանգում մեկ խոհանոց գոր- ծարանից սկսում է հասարակական սննդի բուն ստեղծ- վել: Վերցնեք մի այլ որբնակ—Բյանսկը: Ստեղծվեց հասարակական սննդին աջակցող կոմիտե Բյանսկում:

Այդ կոմիտեն առաջ մղեց թեժինսկի խոհանոց գոր- ծարանի հարցը, Մի շաբաթ այլ որբնակներ ցույց նույն տակս միայն պատկերը: Այդ տեղի յի ունե- թյան կոմիտեյում նստած են այնպիսի ընկերներ, վո- րոնք զանազան խողովակներով կապված են պետա- հանգական աշխատանքի հետ—նահանգական գործկոմի, նա-

բացիայի և առբաժինների ներկայացուցիչները շնոր- հիվ դրա նախահաշիմներ կազմելիս սկսում են հաշվի առնվել հասարակական սննդի կարիքները: Մենք այս- պիսի մի յերեսույթ ենք նկատում. յերբ կազմակերպ- վում են աջակցության կոմիտեներ, ամենահակառ ժա- մանակից հետո սկսում են առաջ գալ «Ժողովնեղի» տեղական բաժնետիրական ընկերություններ, վորոնք իրենց ձեռքն են վերցնում հասարակական սննդի գոր- ծը. Անելով բաժնետիրական ընկերություններ, նրանք հանդիսանում են՝ նպատակային բաժիններից պահես- տի կապիտալ ստեղծելու ամենամեծ կուն, ամենահարժար ձեւը, այնպիսի կապիտալ, վորի ողնությամբ կարիքի յի ճաշարանների ծավալման գործը առաջ մղել:

Պետք է նկատել, վոր վերջին ժամանակներս կեն- տրոնի աջակցության խորհուրդը, ընկ. Յյուրուղայի մահվանից հետո չի գումարվել. այդ հանգամանքը շատ կողմերով ընդհանրական խանգարել և հասարա- կական սննդի գործին, քանի վոր վերջից մղում չը ստանալով, չեն կարողացել բավականաչափ լայն կեր- պով ծավալել իրենց աշխատանքը նաև տեղական ա- ջակցության կոմիտեները: Նրանց գործունեյությունը շատ տեղերում կատարելավես մեռել է:

Սակայն պետք է կատարելավես հրաժարվել այն մտքից, թե աջակցության կոմիտեներն իրենց գերը կատարել են, թե վոչ մի կարիք չկա, վոր նրանք գո- յություն ունենան: Հասարակական սննդուն այնքան սերտ կերպով կապված ե մասսայի հետ, ըստ եյության, այնքան հեռու յի կանգնած հասարակ առեւրական ժանացի գաղափարից, այնքան հասարակական ուշա- դրություն և հսկողություն ե պահանջում, վոր այն

զեկավար հասարակական մարմինը, վորն ուղղություն է տալիս հասարական սննդին, ինչպիսին են աջակցության կոմիտեները, խիստ անհրաժեշտ են:

Դեռևս հանգուցյալ ծյուրուապան աջակցության խորհրդում կատարելապես ճիշտ կերպով դբեց աջակցության կոմիտեների կազմի փոփոխման հաջողը: Մինչև այժմ այնպիսի գրություն եր տիրում, վոր աջակցության կոմիտեների մեջ իրք մանում եյին շատ կարեր և ոպտակար մասդիկ, վորոնք կարող եյին հասարակական սննդի բարելավման գործի մեջ շատ քան մացնել, սակայն այնուամենայնիվ այդ կոմիտեները ունեցել են նոր հիմնարկային բնույթ, քանի վոր արտադրությունից իրենց կազմի մեջ բանվորներ չունեյին:

Ներկայումս հասարակական սննդի ինսդիրները զգալիորեն փոփոխվել են: Զեռնարկությունների ցանցըն ընդարձակվել եւ: Աշխատանքն այլ բնույթ և ստացել: Ներկայիս ինսդիրն եւ վոչ միայն միջոցներ ճարիք այլ գոյություն ունեցող ցանցի աշխատանքին ուղղություն տալ, խորն ուսումնասիրության յենթարկել հասարակական սննդն մնմիջապես դեպի մասսաները տանելու հարցերը:

Այդ ամենն ամբողջ լրջությամբ դնում ե աջակցության կոմիտեների կազմը դազգյաճի բանվորներով լայնորեն լրացնելու անհրաժեշտության: Հարցը:

Հասարակական սննդի գործում տեղի յեւ ունենում շինարարության հսկայական պրոցես: Փայտերը տնկված են մեր ապագա խոհանոց-գործարանների և ճաշարանների շուրջը, և անհրաժեշտ ե բանվորական աչք, վորպեսի կառուցման նկատմամբ ճիշտ հսկողու-

թյուն ունենա, թույլ շտալով այնպիսի սխալներ, վորոնք շարունակ ստացվում են առաջին հերթին—շինարարության ոբեկտի վերաբերյալ միջոցների դերածախոս կատարելու գործում: Մեր նոր շինարարությունը հասարակական սննդի գործում հենց այդ հիվանդությամբ և տառապում: և այդ սխալների պատճառով վատնվում են հսկայական միջոցներ, վորոնցով բազմաթիվ ճաշարաններ կարելի յեւ կառուցել: Այդ բնագավառում աջակցության կոմիտեների բանվորների մասնակցությունը միանդամայն անփոխարինելի յի: Ամեն մեկին ծանոթ են կուսակցության հենարոյն: Ամեն կոմիտեյի շրջաբերականի այն խոսքերը, վորոնց միտքը կարելի յեւ արտահայտել հետեւալ ձեռվէ Հարդելի կազմակերպություններ, դեն շպրտեք այն միտքը, վոր ինքններդ, առանց բանվորների, ձեր ինժիներների ողնությամբ, ձեր կազմակերպած դիտողությամբ և հսկողությամբ դուք ի վիճակի կլինիք ճիշտ կերպով կառուցել: Դուք պետք ե հենց կառուցման պլոտիկում բանվորների ուշադրությունը դարձնեք դեպի այդ շինարարությունը, բանվորական ժողովներում քննության յենթարկեք վոչ միայն շինարարության պլանները, այլև աշխատանքի ընթացքը, ամեն կենտրոնական կոմիտեն: Այդ մտքերն ամենից ավելի կարող են վերաբերել հասարակական սննդի գործին: 250-միլիոնանոց հսկայական շինարարությունը հինգ տարվա ընթացքում, անշուշտ պարությունը հինգ տարվա ընթացքում ե քաշել բանվորներին աջակցության վորոնցնում և գոչել կասկած չկա, վոր այդ կոմիտեների մեջ և վոչ մի կասկած չկա, վոր այդ մասնակցությունը առանձնապես գնահատելի յեւ մեր աշխատանքը ճիշտ կերպով ծավալելու համար:

Սակայն ներկա մոմենտում ինչպիսի խնդիրներ են դրված աջակցության կոմիտեների առաջ: Այդ խնդիրները պետք են սահմանադժել:

Առաջին մասի մեջ անշուշտ մանելու յի ուժիքի մոբիլիզացիան և տեղական խորհրդային հասարակության ուշադրությունը հասարակական սննդի հարցերի կողմը դարձնելը: «Փողոսնդի» ձեռնարկութմբի ժողովականացումը՝ ճաշարաններում սնունդը գիտականորեն ացիոնալ հիմքերի վրա դնելու բնագավառը և հասարակական սննդի հարցերին վերաբերյալ հատուկ զեկուցութմների կազմակերպումը, տեղական մամուլի ոգուագործումը՝ հասարակական սննդի հարցերի վերաբերյալ պրոպագանդա մղելու և այդ հարցերը պարզաբանելու իմաստով, հասարակական սննդի զարդացմամբ շահագրգուված՝ տեղական հիմնարկությունների և կազմակերպությունների հետ սերտ կապ հաստատելը:

Ճաշարանների շինարարության համար ստացվող բոլոր միջոցները յերկան բերելը, և ժողովրդական սննդի զարգացման համար հատուկ գումարներ հարելը, բանվորների կենցաղը բարեկավելու ֆունդի միջոցների բաշխմանը մասնակցելը՝ հասարակական սննդի գործի համար մաքսիմալ հատկացութմներն ապահովելու իմաստով:

Եերկրորդ խնդիրը պլանային շինարարության խնդիրն են: Աջակցության կոմիտեյի համար անհրաժեշտ են, վոր նա ավելի ուշադրությամբ սասութմասիրի տվյալ ուսունի կամ բնագավառի հասարակական սննդի ծավալման պլանները, այդ պլանների մեջ իր ուղղութմները մտցնի, այդ պլանները կապի իր ուսունի

տնտեսական բոլոր հնարավորությունների հետ: Յեկայի մայմ, յերբ հասարակական սննդի աշխատանքը պըլանային ամուր հունի մեջ են մտել, այդ խնդիրը չափազանց մի պատասխանառու խնդիր են դարձել և մած հետաքրքրություն և նշանակություն ունի:

Սակայն չի կարող այնպիսի զրություն լինել, վոր կառուցվող պալատների կողքին լինեն վողորմելի խրճիթներ: Անհարմար, կեղատոտ, նեղիկ, շենքերի, հաճախ նախկին տրակտիրների գոյությունն ունեցող ցանցը պահանջում են հիմնական վերակառուցում: Իզուր չեն, վոր ննդամյա պլանով այդ գործին հատկացվում են 22 միլիոն ուուրլի: Հաշվի առնել գոյությունն ունեցող ցանցի պահանջները, այդ ցանցի համար հիմնական նորոգություն անելու պլաններ մշակել, թեկուզ և այդ ցանցը մասնակի մեքենացման յինթարկել: — ահա մի չափազանց լուրջ և մեծ խնդիր, վորը դրված և աջակցության կոմիտեների առաջ:

Վերջապես, կա գարձալ մի աշխատանք, վորը կապված և շինարարության հետ: Այսուել կատարյալ տեղին և բերել այսպիսի մի որինակ: Բագվում նախատեսված եր կառուցել խոճանոց-գուծարան: Բոլոր կազմակերպությունները մշակեցին շենքի նախապիծը և ընտրեցին այն տեղը, վորտեղ պիտիք և այդ գործարանը կառուցվեր: Այդ գործը տասնյակ հանձնաժողովներից անցավ, և վերջապես աեղը հատկացվեց: Յեկայի մնչ, տեղն աչքները չեր ընկել: վոչ վոք չեր նկատել: վոր հատկացված տեղը ճահճային ե, վորտեղ գետնի տակից ջուրը ըոլորովին հասարավորաթյուն չեր տալիս պահեստարանի համար նկուղային շենք կառուցել: Ահա ավյալ գեպօւմ աջակցության կոմիտեն

կործագրեր իր նախաձեռնությունն ու վերահսկողությունը և ի հարկե, այստեղ հսկայական դեր կարող ելին խաղալ այն բանվորները, վորոնք մտցված կը լինելին աշակեցության կոմիտենի կազմի մեջ:

Յնթե ճաշարանային հանձնաժողովներն աշխատում են հասարակական սննդի մեկ ձեռնարկության շուրջը, յնթե հասարակական սննդի սեկցիաները վարում են ավյալ քաղաքի աշխատանքը, աջտկության կոմիտեն աշխատանքի ել ավելի լայն շրջան և լողագրիկում, միմյանց հետ կապելով ավյալ ու յոնի կամ ընագագառի հասարակական սննդով որոշ հարուցուածություն է առաջանալու համար:

